www.grakantert.am

Թիվ 2 (3498), ուրբաթ, 12 փետրվարի 2021 թ.

Գրական թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տպագրվում է ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ



Էս աշխարհը մարդակերի աշխարհ է, զավակս, չափազանց բարի լինել՝ կնշանակի հանձնվել:

Չպիտի հանձնվես, զավակս, ծաղիկը, որ ծաղիկ է, խոտը, որ խոտ է, էլի պաշտպանություն ունի, դառնություն ունի, փուշ ունի:

Էս կյանքում՝ ոչ մեկը ոչ մեկի լավ ապրելը չի ուզում, հա՛, էդ սուտ է, էդ հեքիաթ է, որ ասում են՝ բարեգործ ենք, օգնում՝ ենք, տալիս ենք... Չէ՛ մի՛ չէ, էդ անում են, որ դու միշտ կարիքի մեջ լինես, որ իրենց ենթակայության տակ մնաս...

Տանջանքը մարդու համար է, զավակս, սկզբում՝ տանջվում են վերջի համար: Քո մեջ կա տանջանքին դիմակայելու ընդունակություն ու որքան ուժեղ է «ես»-ը, այնքան ուժեղ է «մենք»-ը:

Քոնն ուրիշին չտա՛ս: Ինչքան տվեցիր՝ տանելու են, ինչքան տարան՝ խփելու են, ինչքան խփեցին՝ ուժեղանալու են, ուժեղացան՝ քամահրելու են...

Այսօր ՎԱՐՊԵՏԻ ծննդյան օրն է

Հարցումներ, հարցումներ մենք մեզի կը հարցնենք յաճախ: Նախ և առաջ մենք մեզ քննելու ենք իբրև ազգ՝ հասկնալու թէ ինչո՞ւ պարտուեցանք: Ինչ չը-րինք որ պէտք է ընէինք:

Ինչպէ՞ս պատրաստուեցանք երեսուն տարիներէ ի վեր, անխուսափելի պատերազմին, երբ մէկ կողմը՝ բազմատեսակ կերուխումի, միւս ստուար կողմը՝ աղքատութեան մէջ թաթխուած էր: Մէկ կողմը՝ անկախութիւն, միւս կողմը՝ նիւթական կախուածութիւն: Մէկ կողմը հայածուած դաստիարակութիւն, միւս կողմը՝ հայ մշակոյթը մառախլապատող գերեվարուած մարդիկ: Մէկ կողմը Սահմանադրական Դատարանի պէս բան մը, միւս կողմը՝ անիրաւուածներ, հարստահարուողներ: Արցախը սրբազան մասունքի պէս պաշտողներ, և մեր պապենական ժառանգի կողոպուտին համակերպողներ: Իբրև օժանդակութիւն հասած միլիոնաւոր տոլարները կը ցնդէին և դղեակներ ու ապարանքներ կը բուսնէին՝ իր օրապահիկը հազիւ վաստկող բնակչութեան չորս կողմը: Պենթլիներ կը սուրային, երբ մամիկներ կարկտնուած փէշերով փողոցները կ՚ալէին: Շարլ Ազնաւուր ցաւումով ըսաւ. «Աշխարհ պտըտեցայ, հայ մուրացկան չտեսայ: Մուրացիկը միայն Հայաստանի՛ մէջ տեսայ»:

Երեք տասնամեակ անդադրում թալան և քաղաքական անլրջութիւն՝ մեր գլխուն վրայ ճօճուող վտանգներուն նկատմամբ: Գաղտնի համաձայնութիւններ մեր թշնամիներուն հետ. ծախելմախելներ: Մահացու ուրուականներ երկրին մէջ, և հազիւ իր առօրեան կարգի դնող ժողովուրդ, որ ցնծութիւն կը սիրէր: Արուեստ կ՚արարէր: Տաղանդներու հոյլեր: Եռանդի բոցեր: Բարիքի ակունք:

Ահաւասիկ պայթեցա՛ւ պատերազմը, 44 օր «Յաղթելու ենք» յանկերգի ընթացքին իր էութի՛ւնը՝ իր արիւնը թափեց մեր մատաղ սերունդը, տնքացին արի վիրաւորները, մղկտացին իրենց սիրտը ճաթած ծնողները, կիներ շուարեցան թէ ինչ պիտի ըսեն իրենց զաւակներուն, իսկ զաւակները քունի ժամուն իսկ՝ բաց աչուկներով իրենց հայրը սպասեցին: Քարացա՛ն մեր լեռները, արիւնլուայ ու մերկ:

Կը զարմանամ թէ այս տարողութեամբ մարդկային ահաւոր ողբերգութեան պատճառ եղող անձինք դեռ ինչպէ՞ս ցերեկը քաղաքականութիւն կը խաղան, իսկ գիշերը հանգի՞ստ իրենց գլուխը բարձին կը դնեն: Այդ տրուած հողերը լուռ չեն, օր մը պիտի բարձրանան և իրենց ահագոռգոռ երախին մէջ առնեն զիրենք գերութեան յանձնողները, նոյնիսկ անոնց դիերը:

Նոյեմբեր ինչի՞ն աթոմական ռումբի պէս մեր ոսկորները կճռտեց և մեր երկինքը խաւարեցուց Վարչապետին ինքնագլուխ ստորագրած թուղթը: «Դաւաճան» սուլող սուրերու անվերջանալի սուսերամարտեր սկսան աջ ու ձախ սուրալ օդին մէջ, սատանայի աչքերու պէս փալփլիլ խաւար երկինքին տակ: Իսկ դիմատետրերն և միտեան ողողեց այնպիսի՛ սև հեղեղ մը լուտանքներու, զրպարտութիւններու, անէծքներու իրարու հանդէպ: Հայհոյանքներու հաստ բառարանի մը բոլոր բառերը գործածուեցան շաբաթներով, չլսուած բառեր, մէկը միւսէն խորդուբորդ ու սիրտ խառնող: Ոսկեղենիկ Հայերէնը պղծուեցաւ: Լաւ որ հետզհետէ կորսուեցաւ թափը:

Մինչ այդ տիւ ու գիշեր մարդիկ ելոյթ կ՚ունենային յայտնելու թէ իրենք ճիշդ են, միւսները սխալ են: Իրենք տարիներու փորձառութիւն ունին, երիտասարդները ըսածնին չեն գիտեր: Իրենք հայրենիքի պաշտպան են, միւսները դաւաճան են. «Ահա ձեզի ցոյց տամ գաղտնի թուղթեր»: Եթէ այդքան սրտցաւ էին, ինչո՞ւ վաղուց չէին յայտնած, չէին ճօճած իրենց «ճշմարտութիւնները»:

Անշուշտ կային նաև լուսաբանող բանավէճեր:

Այս մղձաւանջի ամիսներուն՝ թաքնուած իրողութիւններ կան հարկաւ:

Բայց ինչ որ ակնյայտ է ըստ մասնակից կամ ականատես մարդոց, այն է որ՝ գեներալները փախեր են պատերազմի վայրէն, երիտասարդ մատղաշ անփորձառու տղոց թողած առանձին՝ առաջին գիծի վրայ, որոնք կամ հերոսաբար կռուած, կամ վիրաւորուած, և կամ ալ՝ էն ողբերգականը՝ նահատակուած են: Անոնք անմեղունակ, հայրենիքի ապագային յառած մաքրափայլ աչքերով՝ չեն գիտեր ինչ պատահեցաւ իրենց. բայց մենք գիտենք թէ անոնք կ՚ապրին մշտնջենապէս Եռաբլուրի մէջ: Երկու կաթիլ արցունք ու խունկ իրենց անոյշ յիշատակին: Կային որ նշանակուած հրամանատարին անբացատրելի բացակայութեան պատճառով՝ իրենց գլխուն ճարին նայեցան, ինչ իրաւունքով սուսիկ-փուսիկ կը յանձնէք թշնամիին: Ինչո՞ւ իրենց ձեռքերով շինած բնակարաններէն կ՚արտաքսուին հայ ընտանիքներ: Ինչո՞ւ ռազմագերիները տակաւին նոխազ կը դառնան ազգերի խժդուժութիւններու: Ինչո՞ւ այսքան արտասուք ու կսկիծ, անճրկութիւն և կատաղութիւն՝ հայոց աշխարհի մէջ:

Վեհանոյշ ԹԵՔԵԱՆ

ԱՄՕԹ ԵՒ ՄԵՂԱՅ

շաբաթներով սոված՝ անտառներու մէջ:

Ամբողջ սերունդի մը հոգեվիճակը խախտած է:

Փտած ծառը այժմ կը բացատրուի վերէն վար, փոխանակ վարէ՛ն, արմատներէ՛ն սկսելու... Ինչո՞ւ նախ չհամադրել եղելութեան բոլոր ծալքերը, և ապա՝ կազմալուծել, գտնելու խորքը մեր ողբալի պարտութեան:

Առանց բացառումի բոլոր դերակատարները և անոնց արբանեակները դատարանի մէջ հարցաքննել: Ցաւսիրտ մարդոց կողքին՝ միտեան խճողեր են քաղաքական շահեր և ինքնարդարացում հետապնդողները: Մեծխօսիկները, ստախօսները, յուդաներն ու մերթ ընդ մերթ՝ առաքեալները:

Մեր պարտութեան Ինչպէ՞ս-ը գիտենք. ո՞վ և ինչո՞ւն է հարկաւոր: Իրաւական գետնի վրայ հարցաքննելու է իւրաքանչիւրը որպէսզի ի վերջոյ յայտնուի թէ ո՞վ էր, որո՞նք էին որ պատրաստեցին մեր բազմաւեր պարտութեան թոյնը:

Այդ թոյնի սրուակը պարտադրաբար խմեցին հայոց Հողը, համայն հայ ժողովուրդը ծագէ ի ծագ, և անշուշտ՝ Հայոց Պատմութիւնը:

Կիսաւեր դարձուցին մեր հոգեկայանը:

Ինչո՞ւ փտտեցաւ մեր նորայոյս ծառին արմատը:

Եթէ այսպէս ամէն գլուխէ ձայն մը ելլէ՝ և կորիզը գտնելու աշխատանք չտարուի, պիտի կրկնուին սխալները, ու մեր դատողութիւնը պիտի մնայ թմբիրի մէջ: Հետևանքը - յաւելեալ պարտութիւններ պիտի քառասմբակ յառաջանան, լափելով մեր արժանապատիւ գոյատևելու իրաւունքը:

Հազար ութ հարիւր կոթող, հարիւրաւոր դարեր իբրև ուխտի խորան պաշտուած տաճարներն ու վանքերը Արցախի՝

Դուք, նախագահներ, ղեկավարներ, պատերազմի՛ պիտի պատրաստուէիք, հեռատեսութիւնն ու պայքարը պէտք է ձեր հոգին զօրացնէր, որպէզի ստրուկի պէս չխեղճանայիք և չամչցնէիք ձեզ իր վրայ հովանի կարգած ժողովուրդը: Ամոր հիմա փշրանք մը հաց կուտաք, ճեղքուած երդիքը կը նորոգէք, վարժարան ու այգի անվտանգ կը դարձնէք, պարտադրաբա՛ր: Հաշիւ պահանջող կայ:

Ինչո՞ւ համար Հայաստան թէ Սփիւռք՝ հայ ազգը մէկ հոգի ու մարմին դարձած գիշեր ցերեկ տքնեցաւ, զինուորներուն հաց ու վերարկու հասցուց, 44 օրուայ ընթացքին 170 միլիոն տոլար հաւաքեց, յատկապէս պատերազմի զոհերուն ու կորոստներուն համար: Այդ գումարը ձեզի՛ յանձնուեցաւ: Բայց... Պատերազմը հազիւ աւարտած՝ բարեսիրական կազմակերպութիւններ հապճեպ գործի լծուեցան՝ մէջտեղ մնացողներուն օգնելու համար: Դուք չփութացիք: Ժողովուրդը՝ փերուշան, դուք անդադար արդարացում կը ստեղծէիք աղետին մասին:

Մինչև իսկ գծուծ պատասխանատուներ՝ զինուորներուն համար արտասահմանէն նուիրուած քնատոպրակները և այլ անհրաժեշտ իրերը ծախեցի՛ն նոյն ինքն զինուորներուն: Ձաւթեցին անոնց կռուելու անսակարկ նուիրումը և ապրելու իրաւունքը: Դուք գործակից եղաք համայնակուլ ողբերգութեան:

Պարտուած ենք բանի և գործով, կամայ թէ ակամայ: Գիտութեամբ թէ անգիտութեամբ: Մեղա՛յ մեր զոհերուն ու գերիներուն: Մեղա՛յ հայոց թանկագին ժողովուրդին և իր մշակոյթին: Մեղա՛յ մեր փառապանծ հայրենիքին:

Ամչնալը նուաստացնող է: Մեղա՛ն՝ թերևս փրկարար:

Յունուար, 2020
Նիւ Ճըրզի

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՌԻԹՈՎ

Ազգը տնտղում է ինքն իրեն՝ հավերժության վերջնահաշվարկով

Սամվել ԿՈՍՅԱՆ - Ընկճախտն այսօր մառախուղի պես երկրի վրա է և այնքան թանձր, որ համարյա անտեսանելի է դարձել ապագան: Նման հոգեվիճակը անոմալիա՞ է, թե՞ տեղի ունեցած իրադարձությունների բնական հետևանք:

Աշոտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Սա համահայոց ընկճախտի հերթական անխուսափելի արարն է: Մենք սրան գնում էինք քայլ առ քայլ՝ թերահաշվարկի ահագնությամբ պայմանավորված: Երկիրն ու ժողովուրդը ընկճախտի են մատնվել ոչ այնքան «հանկարծահաս աղետի» հետևանքով, որքան աշխարհում միայնակ մնալու օրըստօրե թանձրացող, հոգեջլատիչ զգացողության բերումով: Ազգային հոգեբանության առումով՝ նաև հետևանք է սեփական քաղաքական ապագայի հանդեպ հավաքական հայ մարդու անտարբերության և մտքի ծուլության: Մենք՝ հայերս, չենք ունեցել և չունենք մեր հայրենիքի «տարածքային միասնականության և ամբողջականության գիտակցություն», որովհետև մշակութաբանորեն տարակայացված ու մասնատված ենք եղել և այսօր էլ հիմնականում նույնն ենք մնացել՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Մենք չենք ունեցել նաև «արտաքին կյանքի միասնականության գիտակցություն» և, հետևաբար, մենք երբեք չենք հստակեցրել աշխարհում մեր տեղն ու դերը, այլև Հայաստան հասարակապետական միավորի «անհրաժեշտության» հանգամանքը համաշխարհային մեծ ու փոքր խաղացողների համար, քանզի, պահի թելադրանքով, տրվել ենք անհատականացված ու խմբային շահերի բավարարմանը՝ թող որ անգամ մատից ծծած «լավագույն» հայրենասիրական մղումներով: Սակայն պետության ստեղծումն ու հզորացումը ամենևին էլ հայրենասիրական մղում չէ, այլ, ինչպես Իսրայելի օրինակը ցույց տվեց, գիտակցված հաշվարկ: «Գիտակցված»՝ այն առումով, որ կարևորես պիտի քո իսկ քաղաքակրթական նշանակությունը նախ ինքդ քեզ համար, ապա և աշխարհաքաղաքական թատերաբեմում, և «հաշվարկ»՝ այնու, որ բնազդածին համակրանքներդ կարողանաս զսպել, երբ խնդիրը աշխարհում ինքնահաստատման անհրաժեշտությանն է վերաբերում: Չկա՛ միասնական, հավաքական գիտակցություն, չկա՛ արտաքին կյանքի միասնականության գիտակցություն, կունենանք այն, ինչ ունեցել ենք. սեփական կարողությունները թերա- կամ գերագնահատելու, այլև մսխելու և չարյաց փոքրագույն օտարին ապավինելու ոչ մի տեղ չտանող անձնապաստան, ենթագիտակցական թերահաշվարկ: Սա նաև այն դեպքն է, որ սեփական ապագան կերտելու պատրաստ հավաքականությունը ազգային կյանքով ապրելու գաղափարի պահանջարկ պիտի ունենա, այլապես դրա պակասը ուշ թե շուտ ջլատելու է նրա ինքնիշխան կամքը: Մենք մեզ միշտ հարց ենք տալիս. «որտե՞ղ մենք սխալվեցինք», հաստատ իմանալով, որ սխալը սխալի վրա գործելով՝ հրաշքին ապավինելը առավել ևս մեծացնում է իրադրության ահաբեկչությամբ պայմանավորված անդառնալի, հիմարար սխալի անշրջելիության հավանականությունը: Մենք ամեն օր մեր հավաքական թերկատար գործողություններով մոտեցրել ու ծնել ենք սույն սպառնալից իրավիճակը ու հիմա ցանկանում ենք անկոտրում մենակի ինքնամխիթարիչ, հուսադրիչ խոսքերով բացերը սվաղել...

Ս. Կ. - Նույն ընկճախտն ասես բառերից էլ է ջնջել ապրելու նշանները: Գտնո՞ւմ եք, որ գրողների, և ոչ միայն, ստեղծագործություններն ու խոսքն ավելի ցավի ճիչ են, քան գեղարվեստ:

Ա. Ա. - Իրականությունը քողարկելուն միտված համահայկական խառնաժխորում բառերը կորցրել են իրենց նախաստեղծ, չափաբերված իմաստային բաղադրիչը, և փոխարենը ընկճախտն է խուժել հոգիների մեջ: Կյանքը դարձել է գոյանք, ապրելը՝ ապրանք: Չարենցը կասեր՝ «կքած կյանքի բեռի տակ, խոր գերության ընդերքում», գառան մորթու տակ «դիմակավորված» գայլային ախորժակով համադամասերները դարձել են կյանքից իրենց հանապազօրյա փայը փրցնող հայտնութենական հոռետեսիլքների շահառուներ: Այս պայմաններում գրող, ստեղծագործող մարդու չափաբերված, տագնապալի և դույզն-ինչ ցավամոռուչ խոսքը սվիններով վրա է ընդունվում արյան բաղանիքներից դեռ աչքը չբացած, քաղաքական տուրևառությունների թանձրույթում հոգեխամրված մարդանմանների կողմից: Հայրենիքի գլխին առկախված վերահաս արհավիրքի դեմն առնելուն կոչված գեղարվեստի սպասավորներից արտահեղվող սթափամտության ճիչ-աղաղակն ըստ այդմ շեղվում է իր մարդակերտումի ոգեփայլից և ճարահատ վարգով զորաքայլում արթնության կոչնակը խլացնող ճառասացության խամրախարխափում: Այստեղ է, որ պիտի ասվի. Աստված հեռու պահի բարոյականության քարոզիչներից, ցանկալին իրականի տեղ ներկայացնողներից: Այս իրավիճակում՝ խառնակ, անմտահասու իրադարձությունների բովում ցավի, մորմոքի գերավելցուկով ներծծված գեղարվեստական խոսքը դառնում է մարդուն ու հայրենիքին ինքնաառնչացման չարափառ ճանապարհից հետ պահելուն միտված խարազնագիր և ոչ ավելին:

Ս. Կ. - Դուք բազմաժանր ստեղծագործող եք՝ պոեզիա, արձակ, հրապարակագրություն, գրական վերլուծություններ և այլն: Ժանրերի միջև մրցակցություն կա՞, թե որն է գերակա:

Ա. Ա. - Չէ՛, մրցակցություն, որպես այդպիսին, չկա: Բայց կա ասելիքի հասանելիությամբ և թիրախային խմբերի հասցեականությամբ պայմանավորված ժանրային ընտրության խնդիր: Դա նման է պատերազմի դաշտում հակառակորդի որոշակի կրակակետը խոցելու, լռեցնելու նպատակով առավել արդյունավետ, ասենք՝ օդ-երկիր կամ օդ-օդ զինատեսակի ընտրությանը: Պարզ է, չէ՞, որ ճնճղուկների վրա թնդանոթով չես կրակի: Ոչ էլ հանրությանը պաշարած տեղեկատվական սովը կամ քաղաքացիական դիրքորոշման փնտրտուքը բանաստեղծումի անդրեանական գիտելիքով չես բավարարի: Այստեղ հրապարակագրությունն իր անտեղիտալի ասելիքն ունի: Արձակն այս երկուսը միավորում է ի մի, մի կողմից՝ ընթերցողին իր հետևից տանելով, բայց և տեղ թողնելով նրա ընկալունակության երևակայախաղին: Դե իսկ գրական վերլուծություն ասվածը, իբրև գիտակերպ պայմանականություն, իր ամբողջության մեջ գրական արտադրանքի ճանաչողական գործառնությունների վերաիմաստավորման գործիքակազմ է, որ կոչված է ընդհանուր տեղի դարձած հասկացությունների լեզվով արտահայտելու պատկերաստեղծումի սահանկող տրամաբանությունը: Կարճ ասած՝ գեղարվեստական խոսքից գիտագործնական նստվածքը մաղաքամել: Մյուս կողմից, գրական ժանրերն՝ իբրև այդպիսիք, այսօր ավելի հաճախ են իրար մեջ թափանցում՝ ձուլելով ի մի տիեզերապարփակ հոգեկանության, իմաստնախոսության, պատկերաստեղծման ու հարապարակագրական իրազեկումի մերձիմաստները, զորօրինակ՝

«Այս պատերազմը մեզ դաս չեղավ,
Ձի խուսափելու միշտ կար հնար»:

Բոլոր այս գրական-գեղարվեստական ժանրագոյացումները ներկայացնում են պատմական զարգացման տվյալ փուլում մարդուս տիրապետության տակ անցած երաժշտանոցի ողջ գործիքակազմը՝ լարային, փողային, հարվածային ու ստեղնաշարային:

Ս. Կ. - Ինչ է թարգմանությունը Ձեզ համար, ինքնարտահայտման հավելյալ միջո՞ց, թե՞ առավելապես գործնական նպատակ:

Ա. Ա. - Երկուսն ի մի: Հետբաբելոնյան լեզվական խառնաշփոթից ի վեր ժողովուրդներն ու ազգերը՝ տարակայանալով, իրենց աշխարհաճանաչողական շատ թե քիչ ուրույն ճանապարհն են անցել՝ առավելապես լեզվական միջնորդի ուժով: Թարգմանությունը ազգային մշակույթների խառնարանում հավաստագրված հավաքական ու անհատական ջանքերի արգասիքին հաղորդակցվելու միջոց է, աշխարհագրական տարբեր լայնություններում գոյող ազգերին ու դրանք բաղադրող անհատներին հուզող կենսիմաստի, ապրելու եղանակների ու ընկալումների մշտնջենական որոնումներում տարբերություններ ու ընդհանրության եզրեր գտնելու փորձառնական գիտելիքի փոխանակման միջոց, նաև նորի ու չիմացածի սպասելիքով: Մյուս կողմից, թարգմանությունը նաև ինքնարտահայտման հավելյալ միջոց է՝ ի ցույց դնելու այն, ինչ ուրիշները քեզնից ավելի լավ և ավելի խորն են ասել՝ կանխելով քեզ: Լայն առումով՝ ինչպես ազգային, այդպես էլ թարգմանական գրականությունը առկա իրականության կրկնապատկման, բազմապատկման կրկնագործառույթ է իրագործում. «տեսանել անտեսանելին»: Այսպես համաշխարհային գրականությունն է ձևավորվում՝ իրադարձություններով սուղ ու զգացականորեն ճապաղ մարդկային անհատական կենցաղավարության խտացմանը սպասարկու գործիքը: Եվ, սակայն, ի՞նչ է գրականությունը: Գուցե պարապ վախտի խաղալի՞ք է, մտքի ու զգացմունքի գերթանձրացո՞ւմ, աշխարհաճանաչողական հավելյալ գործի՞ք, դրանցից և ոչ մեկն էլ չէ: Երաժշտությո՞ւն է, նկարչությո՞ւն է, գուցե սեփական վերջավորության գիտակցումին անհաղորդ անհատ մարդու և հավաքական մարդկության մթագնած ուղեղում խաղարկվող հնչյունների, ձայների ու գույների ինքնանպատակ խտացո՞ւմ, սրացո՞ւմ, կարծես էլի՛ չէ, ոչ էլ կախարդանքի կամ մոգության դաշտից է, քանզի միշտ էլ կարող ես խաբկանքի ու խաբեության հմայախաղի արհեստական, շինծու, ձեռակերտ հնարամտությունը հենց տեղում՝ դեպքի վայրում բռնացնել, մերկացնել ու պատին դեմ անել: Եզրակացությունս է, որ գրողն իր միջից է իր գրականության նյութը արարում, ասել է թե՝ ինքն իրեն է արարում և իրենով էլ՝ արտաքին թվացողությունների աշխարհը, որ մեր պատկերացրած իրականության մեջ է գոյում: Մինչդեռ իրականություն ասվածը լավագույն դեպքում լոկ անցյալին կարող է վերաբերել, բայց ոչ ներկային, որն ընդամենը լինելության ընթացք է՝ որպես հնարավորություն, քանի որ ներկան բազմաթիվ հնարավորություններ է, բայց ոչ երբեք ավարտուն իրականություն, որովհետև իրականությունն այն է, ինչն արդեն ձևավորվել-վերջացել է, դարձել հակազդման առարկա ու մնացել է անցյալում: Իրականությունը առավել ևս չի կարող ապագային վերաբերել, որն ըստ էության, դեռևս անգո մի բան է, չգոյություն և ըստ այդմ՝ ժամանակից ու տարածությունից դուրս է, որպեսզի ընկալելի, մտառելի լինի: Այս իմաստով՝ բոլոր մեր թվացողությունները, նաև գրական միջնորդի ուժով մեզ պատկերացող իրականությունը, մեզնից, մեր միջից արտածվող զգայախաբություններ են: Եվ ընդհանրապես խնդիրն այն չէ՝ ճանաչել, թե՞ չճանաչել առկան, խնդիրը տարածաժամանակային այլ հարթությունում է՝ ե՞րբ և ի՞նչ ընդգրկմամբ… համակերպվել:

Ս. Կ. - Եթե հնարավորություն լիներ ամեն ինչ նորից սկսել:

Ա. Ա. - Կփոխեի նախ կենսաձևս, ապա՝ նեղ մասնագիտությունս, բայց գրականությունից որևէ դեպքում չէի հրաժարվի: Եվ եթե հնարավորություն ընձեռվեր, կգերադասեի ազատ ստեղծագործող մարդու կարգավիճակը, որևէ հանրային պարտավորությամբ չկաշկանդված՝ բացի, իհարկե, հայկականությունից ու հայ մշակույթի առաջ խոնարհումից, առանց որոնց իմ կյանքը կլիներ կիսատ ու թերկատար: Քաղաքական հավակնություններից միանշանակ կհրաժարվեի, քանզի այս ասպարեզում երկրիդ իսկապես ծառայե-

ԵՎ ԱՆԱՌԻԹ

լու համար դու կամ նվիրյալ, յԱստուծոյ կոչեցեալ պիտի լինես, կամ գերմարդ, որպեսզի երկիրդ դարձնես իսկապես հարուստ և ոչ օրապահուստ ու դեռ մի բան էլ՝ իրականությանը գերի: Որ չլինի թե սովորական միջակությունների նման, ինչպես մեր այս վայրիվերո ապրած կյանքը ցույց տվեց, որոնք իրենց վստահված գործից լավիցվատից իբր թե գլուխ են հանում, երկիրն ու ժողովրդին կանգնեցնեն կատարված իրապատում փաստի առաջ, այս անիրական Արարատյան դաշտում, ինչի դժբախտ ու դժգույն ականատեսն ենք մենք այստեղ և այսօր՝ ծեր ու մանուկ, այր ու կին:

Ինչ վերաբերում է կյանքը նորից սկսելուն, ես թերևս առավել հակված եմ կյանքը ուզած պահին փոխելու ընձեռված հնարավորություններից օգտվելուն, որոնց իմացաբանական լիցքերը կարող եմ ամփոփել մի քանի ուղենիշային պոստուլատներում.

Երբեք մի՛ կորցրու երկնահայեցության թելը, մանավանդ եթե ժամանակավորապես կտրվել ես հողից…

Երբ կապակցումը բառերի սկսում է խարխլվել, դու լքում ես բառերը, որ համրանան նրանք Աստծո գրկում:

Երեկոյանալուն պես՝ հավաքագրել եղած-չեղած բոլոր իրերը մի տուփի մեջ: Մաքրել կերակրատաշտը աստղերի համար:

Որքան մարդս առաջադիմում է իր իմացության մեջ, այնքան կորցնում է իրեն և իր ու աշխարհի միասնությունը՝ ընկղմվելով կեցության մոռացության մեջ:

Աստվածային Ճշմարտությունն այսօր տարրալուծվել է հարյուրավոր հարաբերական ճշմարտությունների մեջ՝ մարդկանց կողմից մեջ-մեջ արված:

Մարդս տենչում է մի աշխարհ, ուր բարին ու չարը հստակորեն տարբերակված են, քանզի նրա մեջ ձգտում է ներդրված դատելու՝ նախքան հասկանալը:

Ապագան ապահով չէ այնքան, որպեսզի ողջը ինքնահոսի մատնվի:

Ողջը, ինչն արվում է բարեվայելչության պատրվակով, ըստ էության զուրկ է ամենայն ապագայից:

Յուրաքանչյուր ոք ողջ կյանքի ընթացքում երկրորդական հաջողության գերին է մնում:

Կյանքում ամեն ինչ կարելի է հանդուրժել, բացի հանդուրժողականությունից:

Լրացավ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս, ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սամվել Պարգևի Մուրադյանի ծննդյան 75-ամյակը:

Նա հայ հանրության շրջանում նշանավոր ու փնտրված անուն է, ծանրակշիռ գիտնական, որն անցել է կյանքի հետաքրքիր ու արգասավոր ճանապարհ:

Ծնվել է ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Աղձք գյուղում, Հայրենական մեծ պատերազմից վիրավոր վերադարձած մանկավարժի ընտանիքում: Նախնական կրթություն է ստացել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, ապա ընդունվել Երևանի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումը և այն ավարտել մաթեմատիկոս-ծրագրավորողի մասնագիտությամբ: Սակայն հայ գրականության հանդեպ բացառիկ սերը նրան 1964 թ. բերում է Երևանի համալսարան, որի բանասիրական ֆակուլտետը «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ավարտում է 1969-ին: Մասնագիտական կողմնորոշման այս շրջադարձի մեջ վճռական դեր են խաղում ոչ միայն անձնական նախասիրությունները, այլև 60-ականների ազգային զարթոնքի մթնոլորտը, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600, Սայաթ-Նովայի ծննդյան 250, Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակների շքեղ տոնակատարությունները, համալսարանական սիրելի դասախոսներ Մ. Մկրյանը, Հր. Թամրազյանը, Էդ. Զրբաշյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը: Երևանյան գրական-մշակութային կյանքին անմիջական շփումը և մանավանդ Հովհ. Շիրազի ու Պ. Սևակի հետ անձնական մտերմությունը նրան վերջնականապես կապեցին հայ գրականությանն ու մշակույթին: 1969-72 թթ. նա համալսարանի հայագիտական կենտրոնի աշխատակից էր, Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», Հ. Մանանդյանի և Գ. Տեր-Մկրտչյանի աշխատությունները տպագրության պատրաստողներից մեկը: 1972 թ. նա դառնում է «Բանբեր Երևանի համալսարանի» հայագիտական հանդեսի պատասխանատու քարտուղար և մինչև 1985 թ. հրատարակում 45 համար: Այս ընթացքում էլ դրսևորվեցին նրա գիտական հետաքրքրությունները նախասիրած հեղինակների հանդեպ:

Թեկնածուական ատենախոսության թեման ականավոր գրականագետ-քննադատ Հարություն Սուրխաթյանն էր, որի՝ 1910-30 թթ. գործունեությունը նպաստել է մեր գրական մթնոլորտի առողջացմանը, հայ-ռուս գրական կապերին, հին հունական գրականության, Հոմերոսի, Շեքսպիրի, Տոլստոյի, Դոստոևսկու, Բլոկի, ինչպես և Թումանյանի, Սիամանթոյի, Տերյանի ստեղծագործությունների մեկնաբանությանը և մանավանդ Չարենցի, Բակունցի ու մյուս տաղանդավոր գրողների իրավունքների պաշտպանությանը թերուս պրոլետգրողների և ձախ քննադատության վտանգավոր հարձակումներից: Արդյունքը 1984 թ. հրապարակային հաջող պաշտպանությունն էր և 1988 թ. «Հարություն Սուրխաթյան» մենագրության հրատարակումը:

ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետում տարիներով հայոց լեզու և գրականություն դասավանդած Ս. Մուրադյանը 1984-ից դասախոսական աշխատանքի է անցել հայ գրականության ամբիոնում: Նոր շրջանի հայ գրականության պատմության հետ միասին նրան վստահվեցին «Գրական ուղղությունները և հոսանքները 19-րդ դարի հայ գրականության մեջ», «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան», «Հայ պոեմի արվեստը» (վերջին երկուսը մագիստրատուրայում) դասընթացները, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի բանաստեղծներով հարուստ շրջանի (Թումանյան,

ՀԳՄ վարչությունը

շնորհավորում է գրականագետ

Սամվել Մուրադյանին

ծննդյան 75-ամյակի առթիվ

«Գրական թերթը» միանում է

շնորհավորանքին

Իսահակյան, Տերյան, Սիամանթո, Մեծարենց, Վարուժան, Ռ. Սևակ և ուրիշներ) դասավանդումը:

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հրավերով Ս. Մուրադյանը 1992-94 թթ. հայ գրականություն և Նոր Կտակարան է դասավանդել Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում: Հիմնականում այստեղի Գյուլբենկյան մատենադարանում է նա կատարել և 1994 թ. ավարտելով իր հետ բերել «Երվանդ Օտյան. կյանքը և ստեղծագործությունը» դոկտորական ատենախոսությունը, որը նոր հայացքով մշակված գիտական ծանրակշիռ խոսք է հայ մեծ երգիծաբանի մասին: «Երվանդ Օտյան» մենագրությունը լույս տեսավ 1996-ին, իսկ նրա լրամշակված տարբերակը՝ 2012-ին:

Իր բազմաթիվ մենագրություններում և գիտական շուրջ 120 հոդվածներում նա լայն ու ընդգրկուն հայացքով է դիտարկել հայ գրականության տարաբնույթ խնդիրները: Նրա տեսադաշտում են եղել 5-21-րդ դդ. մեր գրականության գրեթե բոլոր ակնառու երևույթները՝ Խորենացին ու Բուզանդը, Եղիշեն ու Փարպեցին, Նարեկացին ու Սայաթ-Նովան, Աբովյանն ու Ալիշանը, Նալբանդյանն ու Պատկանյանը, Պեշիկթաշլյանն ու Դուրյանը, Շահազիզն ու Ջիվանին, Պարոնյանն ու Օտյանը, Ռաֆֆին ու Մուրացանը, Թումանյանն ու Իսահակյանը, Նար-Դոսն ու Լ. Շանթը, Սիամանթոն ու Վարուժանը, Տերյանն ու Չարենցը, Դ. Դեմիրճյանն ու Ստ. Զորյանը, Բակունցը և Հր. Մաթևոսյանը, նորագույն բանաստեղծներն ու արձակագիրները:

Նշված հեղինակներին նվիրված ուսումնասիրությունների զգալի մասն ամփոփված է «Գրական հանգրվաններ» գրքի Ա (Եր., 2003), Բ (Եր., 2007) և Գ (Եր., 2010) հատորներում (տպագրության պատրաստ է Դ հատորը): Դրանք մեծ պահանջարկ ունեն ուսանողության շրջանում և վաղուց սպառվել են:

Պրոֆ. Ս Մուրադյանի նախաձեռնությունն է երեք հատորով «Հայ նոր գրականության պատմության» բուհական դասագրքի ստեղծումը: Նրա հեղինակած Ա հատորը քննարկվել և որպես ուսումնական ձեռնարկ երաշխավորվել է տպագրության և լույս կտեսնի շուտով:

Պրոֆ Ս. Մուրադյանը մեծ ջանքեր է ներդրել Հովհ. Շիրազի ստեղծագործությունների ուսումնասիրման, նրա ձեռագրերի հրատարակման ընագավառում: Նրա «Հովհաննես Շիրազ. Բանաստեղծը, մարդը» երկհատոր մենագրությունը (գիրք Ա, Եր., 2012, գիրք Բ, Եր., 2015) արժանացել է ՀԳՄ 2016 թ. «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակին: Նրա խմբագրությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով արդեն լույս են տեսել Հովհ. Շիրազի «Անի» (2011), «Թոնդրակեցիները» (2014) պատմափիլիսոփայական մեծածավալ պոեմները, «Հատընտիր» (2012), «Հուշարձան հայրիկիս» (2017) բանաստեղծություններով հյուսված պոեմը, «Անտիպ էջեր» շարքի երեք գրքերը (Ա, 2018, Բ, 2019, Գ, 2020, տպագրության պատրաստ է ևս երկու գիրք), այժմ չորս սկզբնաղբյուրների համադրությամբ հրատարակության է պատրաստում Հայոց ցեղասպանությունը պատկերող «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմի ամբողջական տարբերակը՝ վերականգնելով խորհրդային ժամանակներում արված գլավլիտի և խմբագիրների կրճատած մասերը:

Նա այսօր էլ մայր բուհի հայ բանասիրության ֆակուլտետի գործող երևելի դասախոսներից է, որին սիրով են ունկնդրում ուսանողները: Հանրագիտարանային իմացություններով օժտված այս գիտնականը հմտորեն է ղեկավարում իրեն արդեն երկու տասնամյակ վստահված ամբիոնը, որտեղ տիրում է գիտական լրջմիտ մթնոլորտ:

Նա անմնացորդ եռանդով մասնակցում է հանրապետության գիտական ու գրական-մշակութային, միջազգային ու հանրապետական գիտաժողովների, դասախոսություններով հանդես է եկել ոչ միայն Հայաստանի ռադիոյով ու հեռուստատեսությամբ, այլև Երուսաղեմում, Բեյրութում, Հալեպում, Թեհրանում ու Սպահանում, Թբիլիսիում, ԱՄՆ-ում և այլուր: Սերտ է նրա համագործակցությունը ԵՊՀ արտահամալսարանական կրթության բաժնի հետ, որի ծրագրով դասախոսել է Երևանի և ՀՀ հեռավոր մարզերի դպրոցներում: 11 տարի եղել է ՀՀ Ազգային ժողովի և 7 տարի Շուշիում ամերիկահայ բարերարների կազմակերպած համահայկական ասմունքի փառատոների գնահատող հանձնախմբերի կազմում: ՀՀ ԲՈԿ-ի՝ ԵՊՀ-ում գործող բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի», «ՎԷմ» համահայկական հանդեսի, ԵՊՀ և ՀՊՄՀ հայագիտական հանդեսների խմբագրական հանձնաժողովների անդամ է, տարիներ շարունակ եղել է ՀՀ Նախագահի պետական մրցանակ շնորհող հանձնախմբի անդամ, ԵՊՀ 2009 և 2019 թթ. եղել է ԵՊՀ 90 և 100-ամյակների առթիվ հրատարակված «Կենսագրական հանրագիտարանի» խմբագրական խորհրդի կազմում, ԵՊՀ գիտական խորհրդի և հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդների անդամ է, Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի, ՀՀ Ազգային գրադարանի գիտական խորհուրդների անդամ:

Թեհրանում և Սպահանում վարել է Իրանի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

ՀԳՄ անդամ է 2011 թվականից, եռանդով մասնակցում է նրա միջոցառումներին: Պարգևատրվել է գերատեսչական բազմաթիվ մեդալներով ու պատվոգրերով, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով և «Պատվո մեդալով», ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալով, ՀՀ վարչապետի, ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալներով, ԵՊՀ Ոսկե մեդալով, արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Սրտանց շնորհավորում ենք վաստակաշատ ու իմաստնացած գիտնականին ծննդյան 75-ամյակի առթիվ և ցանկանում քաջառողջություն, գիտակրթական բեղուն գործունեություն ու սրտի երջանկություն...

Ալբերտ ՄԱԿԱՐՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր

Հովհաննես
ԱԶՆԱՈՒՐՅԱՆ

Ժամանակը սառել էր

Կարին, Մուշ, Անի, Վան
Լ.Բ.

Ժամանակը սառել էր, ժամանակը մեռել էր, ժամանակը կանգ էր առել, ժամանակը դադարել էր: Սպասում էր, զննում, ականջ դնում, դողդողում:

- Բարի երեկո: Երկու կապուչինո: Մեկը՝ շաքարով, մյուսը՝ նորմալ:

Մեծ ուսապարկը մեջքին՝ քայլում էր Աբովյան փողոցն ի վար: Սուզվեց «Մետրոնոմ» առևտրի կենտրոնի գետնանցումի մեջ, դուրս ելավ գետնանցումից ու դարձյալ գնաց ներքև՝ «Carpisa»-յի, «Ռոբերտո»-յի, «Ռենուար»-ի, «Փարիզյան սուրճ»-ի կողքով: Հետո կտրուկ թեքվեց ձախ ու հայտնվեց coffee-house-ի փայտե վաճառասեղանի առջև՝ դալանի դիմաց:

- Մեծ, թե փոքր,- վաճառասեղանի ետևից հարցրեց բարիստան՝ դիմակով ու «ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ» գրությամբ շապիկով:

- Ինչ:

- Կապուչինոն մե՞ծ, թե փոքր:

- Հա՛... Մեծ,- պատասխանեց տղամարդը և աչքը չկտրելով շապիկի վրայի գրությունից՝ մտածեց. «Երբ հասցրին էս շապիկները տպագրել»:

Չէ՞ որ ժամանակը սառել էր, ժամանակը մեռել էր, ժամանակը կանգ էր առել, ժամանակը դադարել էր: Սպասում էր, զննում, ականջ դնում, դողդողում:

Բայց չէր շարժվում:

Ու ոչ ոք չգիտեր, թե երբ նորից կշարժվեն ժամացույցի սլաքները, երբ կհալչի նորից ժամանակը, երբ ամեն ինչ շարժման մեջ կմտնի և կդադարի սպասել...

«Երբ նորից կշարժվեն ժամացույցի սլաքները,- մտածեց տղամարդը,- երբ կհալչի նորից ժամանակը, երբ ամեն ինչ շարժման մեջ կմտնի և կդադարի սպասել»:

Կարին.

«Արդեն գալիս եմ: Ո՞ւր ես»:

Մուշ.

«Մեզ համար սուրճ եմ պատվիրել»:

Կարին.

«Հիշում ես, չէ՞, ինձ առանց շաքարի: Բայց ես մի պահ պիտի կոշկակարի մոտ մտնեմ»:

Մուշ.

«Օքեյ»:

Մուշին միշտ թվում էր, թե ինքը շատ բան գիտի ժամանակի մասին: Այդպես էր թվում նրան: Միշտ գիտեր, օրինակ, որ ժամանակը կարող է տարբեր լինել: Որ այս կյանքում այնպես է լինում, որ նայում ես ժամացույցին ու տեսնում՝ ժամանակը վաղուց անցել է, որ իզուր ես սպասել: Հենց այդ ժամանակ, երբ արագ չես կողմնորոշվում, թե էլ ինչի սպասես, դու մեռած ես լինում: Գիտեր, որ ժամանակը հիշողություն է: Գիտեր, որ մարդկային ուղեղը, փա՛մոք Աստծո, ունակ է շատ բան մոռանալու՝ թե՛ ժամանակավորապես, մի կարճ ժամանակով, թե՛ մի երկար ընթացք, և հենց դրանում է փրկությունը: Իհարկե, գիտեր, որ ժամանակը միշտ գնում է: Որպես բժիշկ՝ գիտեր, որ ժամանակը պարբերաբար ավարտվում է, երբեմն՝ անսպասելի, բայց միշտ վերջանում է, և միայն այդ ժամանակ է կարիք լինում բարձրանալ աթոռի վրա, բացել պապի մեծ ժամացույցի դռնակները և ժամանակը նորից ընթացքի մեջ գցել: Բայց նա երբեք չէր կարող ենթադրել, պատկերացնել, որ ժամանակը կարող է անհետանալ, որ կարող է ընդհանրապես չլինել: Ասես սիրտդ չի խփում, ասես թե համրացել ես, խլացել, կուրացել, ասես՝ ոչինչ չկա: Ժամանակը կարող է անհետանալ, երբ քեզ ստրկացրել է տագնապը: Այդժամ դու ուղղակի դադարում ես ապրել: Ժամանակը անհետանում է այն ժամանակ, երբ ավարտվում է կյանքը:

Կյանքն այդ ժամանակ ավարտվեց: Եվ միայն թույլ, անվստահ, «թելանման» զարկերակ հայտնվեց, երբ նա տեսավ Կարինեին: Դուրս գալով «Մետրոնոմ»-ի գետնանցումից, Աբովյան փողոցով ցած իջավ, անցավ «Carpisa»-յի, «Ռոբերտո»-յի, «Ռենուար»-ի, «Փարիզյան սուրճ»-ի կողքով... Կարինեն Մուշեղին սկզբում չնկատեց, իսկ հետո նկատելուն պես գլխով արեց, նշան անելով, որ մտնում է դալանից ներս, որտեղ, ինչքանով որ Մուշեղն էր տեղյակ, կոշկակարի բուդկան էր: Կարինեն մի կոշիկը պահել էր ձեռքին, այդ պատճառով էլ երկու քառորդ տակտի տակ զվարճալի կաղում էր, իսկ բոբիկ ոտքը զգուշորեն դնում էր մայթի բետոնե սալիկների վրա:

«Կյանքին (կամ մահին) հաղթելու համար, պետք է հաղթել ժամանակը,- մտածեց Մուշեղը:- Քանի դեռ մենք չենք հաղթել *մեր ժամանակը*, մենք չենք ապրի»:

Մուշեղը վճարեց սուրճի համար, նորից կարդաց վաճառասեղանի մյուս կողմում բարիստայի շապիկի վրայի գրությունը, ապա քայլեց դալանի կողմը՝ երիտասարդ կնոջ հետևից: Բակի կողմից դուրս գալով՝ տղամարդը թեքվեց կոշկակարի մոտ և ուսով բացեց դուռը:

- Բարև Ձեզ,- կոշկակարին ողջունեց Մուշեղը:- Պրիվետ,- ողջունեց Կարինեին ու մեկնեց նրան կապուչինոյի բաժակը:- Ահա քոնը, առանց շաքարի:

- Վա՛յ, ապրես:

Կոշկակարն արդեն հրաշքներ էր գործում կոշիկի կրունկի հետ, և թվում է, թե ռադիոյով ռազմաճակատից հաղորդվող լուրերն էր լսում:

- Պատկերացնո՞ւմ ես, տնից դուրս եկա, իսկ էս հիմար կրունկս կոտրվեց: Բայց էլ հավես չկար տուն վերադառնալու: Մարդիկ ինձ երևի ապուշի տեղ դրեցին:

- Պատկերացնում եմ:

Կինը բոբիկ ոտքը դրեց կոշկակարի՝ դեմ տված թերթի վրա ու սուրճից կում արեց:

- Վա՛յ, ապրես դու: Ինձ հիմա մենակ սուրճը կփրկեր:

- Դու ո՞նց ես,- նրան ընդհատեց Մուշեղը:

- Բոլորի նման...- հնչեց պատասխանը:

- Հա՛,- մտածկոտ միացավ խոսակցությանը կոշկակարը: Երևում է նա այնուամենայնիվ մինչև վերջ կենտրոնացած չէր լուրերի ու կրունկի վրա,- մենք հիմա բոլորս ենք բոլորի նման: Պատերազմ է...

- Պատերազմ է...- կրկնեց Մուշեղը ու մտածեց. «Միայն թե Կարինեն հիմա չսկսի հարցեր տալ»: Բայց նայելով կնոջը՝ տղամարդը հասկացավ, որ հարցերը սպասվում են հետո, երբ դուրս կգան այդտեղից ու Երևանի աղեղնաձև փողոցներով կքայլեն Կասկադի կողմ:

Երևանի վրա տարածվում էր մթնշաղը, և տարօրինակ էր դա չնկատելը: Չէ՞ որ ժամանակը սառել էր, ժամանակը մեռել էր, ժամանակը կանգ էր առել, ժամանակը դադարել էր: Եվ ինչպես պարզ կդառնա հետո, ժամանակը կանգ էր առել պատերազմի ուղիղ քառասունչորս օր, իսկ հետո այն այնպես կանհետանա, ասես երբեք ժամանակ գոյություն չի էլ ունեցել, իսկ հետո կգա անժամանակ աշունը, նրանից հետո՝ անժամկետ ձմեռը: Եվ ինչ-որ մեկն անպայման կասի. «Ասո՛ւմ էի, չէ՞»:

Պայծառատեսները երկու տեսակի են լինում: Առաջինները սովորաբար չարախնդում ու ուրախանում են. «Ասո՛ւմ էի, չէ՞»: Սրանք շահամոլ պայծառատեսներն են: Նրանք, ում ինչ-որ բան է պետք: Բայց կան նաև երկրորդ տիպի պայծառատեսներ: Երբ պոկված ու արյունոտ սիրտն ափի մեջ մեկնած ու ցավից ձայնը կորցրած՝ շշնջում են. «Բայց ես ասում էի, ես նախազգուշացնում էի...»: Առաջինն էլ, երկրորդն էլ նույն քանակով գոյություն ունեն:

- Ոյուկզակիդ մեջ ինչ է,- հարցրեց Կարինը:

- Դեղորայք, բինտ, մառլյա, ներարկիչ, թել... Դեղատնից առա,- պատասխանեց Մուշը,- մեքենայի մեջ էլ տուփեր կան: Հիվանդանոցի բակում եմ թողել մեքենան:

Կոշկակարը շարունակում էր հմտորեն դխկդխկացնել փոքր մուրճիկով և շուրթերի արանքում հինգ-վեց հատ փոքր մեխ սեղմած պահելով՝ լսում էր նրանց զրույցը:

- Հաստա՞մ ես որոշել գնալ,- հարցրեց Կարինը Մուշին:

- Հա՛, իհարկե: Վանիկն ախր էնտեղ է: Եվ ընդհանրապես...

- Էդպես էլ լու ր չկա՞ երեխուց:

- Չէ՛...

Վերջին մեխը խփելով՝ կոշկակարն ասաց.

-Ես էլ էի առավոտը գնացել կամավոր գրվելու: Բայց ինձ չվերցրին: Ոտքիս պատճառով...

- Ես ոչ մի տեղ էլ չեմ գրվել: Ուղղակի գնում եմ,- բացատրեց Մուշեղը:

Բայց կոշկակարն ասես նրան չլսեց ու կրկնեց.

- Ես էլ էի առավոտը գնացել կամավոր գրվելու: Բայց ինձ չվերցրին: Ոտքիս պատճառով: Պրոթեզ է: Էն մի պատերազմից: Ասում են՝ հիմա շատ լավ պրոթեզներ են դնում: 90-ականներին կարգին բան չկար: Բայց ասա՝ ի՞նչ կար 90-ականներին:

- Հա՛, 90-ականներին ամեն ինչ ուրիշ էր,- համաձայնեց Մուշեղը և նայեց, թե ինչպես է Կարինը սուրճը խմում:

- Էսօր վոյենկոմատում...- սկսեց պատմել կոշկակարը,- միջին տարիքի մի մարդ եկել էր, որ կամավոր գրվեր: Մեկ էլ սեփական հորը տեսավ՝ բիձա մարդ, եկել էր հերթի մեջ կանգնել: «Ա՛յ պապ,- զարմացած հարցնում է,- դու էստեղ ինչ ես անում, հը՞»: Բիձեն նայեց տղուն, մեկ էլ. «Այ քաքլա՛ն, բա գիտեիր հայրենասիրությունը մորի՞ցդ ես ժառանգել»: Բոլորս խնդացինք:

- Գրանցեցի՞ն պապիկին,- հարցրեց Կարինեն:

- Չէ հա՛: Ասեցին՝ գնա՛ տուն, ոտքի տակ մի՛ ընկի: Նա էլ գնաց՝ քֆրտելով... Վերջ: Ես գործս պրծա,- ու կոշկակարը սեղանի վրայով մեկնեց կոշիկը:

Մուշեղը ծնկի իջավ ու Կարինեի ոտքին հագցրեց կոշիկը: Հետո ոտքի ելավ, վճարեց կոշկակարին, վերցրեց իր ուսապարկը, ու նրանք դուրս եկան՝ կապուչինոյի դատարկ բաժակները գցելով մուտքի մոտ դրված աղբանոթի մեջ, որի վրա գրված էր. «Դիմակների ու ձեռնոցների համար»: Երբ Մուշեղը նայեց Կարինեին, հասկացավ, որ կինը լալիս է:

- Ինչ եղավ:

- Էսքան ժամանակ դեռ ոչ մի տղամարդ ծնկի եկած ինձ կոշիկ չի հագցրել: «Մոխրոտիկը» կարդալուց հետո միշտ էդ եմ երազել:

- Ահա...

Դուրս եկան Տերյան փողոց, բարձրացան, ապա թեքվեցին Մոսկովյան, անցան Պրոսպեկտը և անցնելով Սարոյանի հուշարձանի կողքով՝ գնացին դեպի Գաֆեսճյան այգի, քանդակների ու ինստալյացիաների մոտով՝ Կասկադի կողմը:

- Անին ո՞նց է: Դիմանո՞ւմ է:

Մուշեղը չէր սիրում, երբ Կարինեն կնոջից հարցեր էր տալիս: Հակիրճ պատասխանեց. «Դիմանում է, բայց մանրից խելագարվում է», ու հիշեց Անիի վերջին խոսքերը, երբ արդեն տան միջանցքում էր ու հրաժեշտ էր տալիս.

- Երեխուս ետ բեր, հետո ինչ ուզում ես՝ արա: Ուզում ես՝ թող, գնա: Ուր ուզում ես: Ում մոտ ուզում ես: Մենակ թե տղուս ետ բեր...

Ամենասարսափելին այն էր, որ այդ պահին սենյակից դուրս եկավ հայրը, ծեր, շատ ծեր Վան ավագը, Վան Մուշեղովիչը: Նա գրկեց քառասներեքամյա որդուն ու ուղիղ ականջի մեջ շշնջաց այնպես, որ Անին չլսի (երբ սկեսրայրը հայտնվում էր, ինքը մի կողմ էր քաշվում).

- Եթե շրջափակման մեջ ընկնեք... Եթե զգաս, որ գերի ընկնելուց չեք խուսափի, Վանիկի վրա կրակի՛ր, հետո քեզ վրա կրակի՛ր: Էս ազգանունով, ո՞նց որ մերն է, ավելի լավ է մեռնել, քան դրանց գերի ընկել... Լսեցի՞ր:

Մուշեղը համբուրեց հորն ու հե-

Գարնանային

ռացավ: Ու ամբողջ օրը մտածում էր. «Ո՞նց նա *դա* կաներ: Ո՞նց կկարողանա *դա* անել: Հնարավո՞ր է դա»:

Մինչ բարձրանում էին Կասկադի աստիճաններով, Կարինեն պատմեց, թե ոնց էր առավոտյան մետրոյով գործի գնալիս զարմանում, որ վագոններում տղամարդ չկար: Մի երկու-երեք պապի, մնացածը՝ կնանիք: Ինչ է, բոլորը զինկոմիսարիատների պատերի տակ հերթապահո՞ւմ են: Հետո ասաց նաև, որ սկսել է քողարկող ցանցեր գործել:

- Ֆեյսբուքում հայտարարություն կար, ես էլ գնացի: Մեր դպրոցում էր՝ պարզվեց: Դասատուներն էլ, աշակերտներն էլ, կամավորներն էլ, բոլորն էնտեղ են: Ով ասես, որ չկա: Նույնիսկ բալետի մի պարուհի ու ֆլեյտահարուհի: Մեզ ձկնորսական ցանցեր ու գործվածքի կտորտանք են բերում (չգիտեմ որտեղից են, բայց մենք դրանց «եղևնիներ» ենք անվանում, տարբեր չափսերի են լինում): Մենք կտրում ենք, տեսակավորում ենք ըստ չափսերի, հետո էդ «եղևնիները» կապում ենք նախասրահում կախված ցանցի վրա: Մեզ մոտ արդեն երկու անգամ նախարարությունից կին է եկել, մաստեր-կլասս է անցկացրել: Հպարտացի՛ր ինձանով, Մի՛ւշ: Ես արդեն ոչ միայն տեսակավորող, նույնիսկ կտրտող չեմ, այլ ինձ արդեն նշանակել են ցանցին «եղևիներ» կապող: Բա՛:

- Ապրե՛ս դու:

- Չգիտեմ,- գլուխն օրորոց Կարինեն,- մեր տղերքին իսկի պե՞տք են էս քողարկման ցանցերը, թե չէ, բայց գոնե էս զբաղմունքը օգնում է շատերիս, որ չգժվենք... Բա գիտե՞ս, մի տիկնոջ աչքի գրողն եմ դարձել. միշտ գալիս, կողքիս է կանգնում, երբ ցանցն ենք գործում, ու ես էլ ականջակալներով եմ աշխատում ու չեմ լսում իր պատմությունները անթիվ-անհամար սիրեկանների ու պսակվելու մեծ ցանկության մասին... Իր տղան էլ է էնտեղ, գիտես... Վանիկի նման ժամկետային է: Էնտեղ էր ծառայում, երբ սկսվեց:

- Հա՛, Վանի նման,- ինքնամփոփ ասաց Մուշը:

- Ու լուր չկա:

- Ոնց որ չկա Վանից,- ինքնաբերաբար ասաց Մուշը:

- Իսկ մի օրից գնում եմ ընկերուհուս մոտ,- շարունակեց իր մասին պատմել Կարինեն, մենք էնտեղ ծանրոցներ ենք հավաքում ու փախստականներին օգնություն բաժանում: Էնքան շա՛տ են, էնքան շա՛տ են: Լինում է զանգում եմ, հարցնում՝ ում կոնկրետ ինչ է պետք: Երեկ էսպիսի մի խոսակցություն եղավ.

«Գրում եմ: Կոշիկ: Աղջկա: 36 չափսի: Տղա երեխա: 12 տարեկան: Ինչ-որ տաք բան: Հա, իհարկե: Կգտնենք: Լավ: Գրեցի: Իսկ պապիկի՞ն: Ասեցիք, որ պապիկ էլ կա: Պապիկին ի՞նչ է պետք»:

«Դե... Ոչ մի բան... Դեմք է մեր պապը: Փնթփնթում է, թե ինչու բերեցինք էստեղ, ուզում էր մնար էնտեղ... Հազիվ մեքենա նստեցրինք»,- պատասխանում է կինը գծի մյուս ծայրին:

«Գուցե ի վերջո մի բան էլ պապիկի համար դնենք»,- պնդում եմ ու լսում եմ լսափողի միջից. «Պապի՛, քեզ ինչ-որ բան պե՞տք է»: Եվ ահեղ պատասխան. «Ինձ ո՛չ մի բան էլ պետք չի»:

«Ասում է՝ ոչ մի բան: Բայց եթե լինի, եթե կարելի է... կոշիկ, 43 չափսի... հողաթափերով է, էդպես է եկել: Ամեն ինչ էնտեղ է մնացել... Դեռ վաղը չէ մյուս օրն էլ պիտի իրեն հիվանդանոց տանեմ... Հիվանդացել է»:

«Լավ... Իսկ ձե՞զ»:

«Վայ, ի՞նչ եք ասում: Աստծու սիրույն: Ինձ բան պետք չի»:

«Հասցեն ասեք...»

Այ էսպես, սիրելի՛ս: Գլուխդ տարա՛:

- Չէ՛,- անկեղծ պատասխանեց Մուշեղը:

Նրանք բարձրացան Կասկադի վերջին հարկաբաժինը, այնտեղ նստեցին դեպի համերգային դահլիճ տանող աստիճանների վրա ու ծխեցին:

Կարինեն այդպես էլ այլևս հարց չտվեց: Ծխեցին, նայեցին, թե ինչպես է այնտեղ հեռվում, գրեթե Երևանի ետևում վարդագույնին տալիս Արարատը՝ շփոթված պատսպարվելով մոխրագույն ամպերի ետևում, և լռեցին ողջ ընթացքում... Մուշեղին դեպի հիվանդանոցի բակում կայանած մեքենան ուղեկցելիս (Կասկադից դուրս եկան Պրոսպեկտ, ապա գնացին Կորյունի փողոցով, հետո մինչև Աբովյան փողոց, այնտեղից էլ՝ վերև) միայն Կարինեն ասաց.

- Եթե մեռնես, քեզ դա երբեք չեմ ների:

Մուշեղը նստեց ղեկին և սլացավ Ստեփանակերտ: Նա դեռ չգիտեր, ոչ մի կերպ չէր կարող իմանալ, որ առաջին իսկ օրը նա կտեսնի որդուն հինգ կիլոմետր հեռու այն տեղից, որտեղ Մուշեղի իմանալով ծառայում էր տղան:

Նրանց տարհանել էին անտառներ, որովհետև հակառակորդի հարձակումը սկսվել էր այն պահից, երբ մեր բոլոր ստորաբաժանումները ռմբակոծել էին ԱԹՍ-ները: Չգիտեր, որ որդուն հանդիպելուց հետո կուղևորվի Ստեփանակերտի տարածքային հիվանդանոց, որտեղ կբերեն բազմաթիվ վիրավորներ, և առաջին երկու օրը նա կվիրահատի, կօգնի տեղացի բժիշկներին: Այն ժամանակ նա չէր կարող իմանալ, բայց հետո նրան կզանգահարի որդին ու կասի, որ նրանց ուղարկում են հյուսիս: Նա միանգամից իր մեքենայով կսլանա նրանց ետևից և ճանապահին կհասնի նրանց: Իր մեքենան կթողնի, կնստի «Ուրալ» և նրանց հետ կգնա ճակատ: Չգիտեր, որ մնացած քառասուն օրը նա արդեն որպես զինվոր կլինի որդու կողքին նրա ստորաբաժանման մեջ: Եվ արդեն ձեռքին հրաձիգ կբռնի:

Մուշեղն այն ժամանակ չգիտեր, որ միայն Արցախում գտնվելու իր վերջին օրը դարձյալ կաշխատի որպես վիրաբույժ: Կփրկի մի վիրավորի: Եվ դա կլինի Կարմիր Շուկայի մոտ: Նա վիրահատությունը կկատարի դաշտային հիվանդանոցում, որը նրանք կստեղծեն ավտոտնակում: Այդ ժամանակ բոլորը մտածելիս կլինեն, թե Կարմիր Շուկան արդեն թշնամու ձեռքում է: Բոլոր դաշտային հիվանդանոցներն այդ ժամանակ արդեն տարհանված կլինեն, Շոշ գյուղի կողմից ճանապարհը փակ կլինի, շտապ օգնության մեքենաները մեծ դժվարությամբ կանցնեն: Վարդանի բրիգադում կիմանան, որ ինքը բժիշկ է: Նրան ռացիայով կխնդրեն բարձրանալ իրենց մոտ: Այնտեղ կլինեն բուժքույր-կամավորներ, նրանք գործիքներ կունենան, և Մուշեղը կխնդրի, որպեսզի բերեն ամենը, ինչ ունեն՝ թելեր, ստերիլ բինտեր, մառլյա: Վիրահատությունը բարեհաջող կանցնի, իսկ հետո վիրավորին մոլորված լրագրողների հետ «նիվա»-յով կուղարկեն Ստեփանակերտ: Այսինքն՝ մեծ հաշվով նա վիրաբույժ կաշխատի ընդամենը երեք օր:

Մուշեղը չգիտեր, որ նա կարող է հայտնվել ամենաթեժ կետերում: Հյուսիսից հետո՝ Ջաբրայիլ, Հադրութ, ապա նորից Ջաբրայիլ, Ջաբրայիլ-Հադրութ և Ֆիզուլի տանող ճանապարհների «9-րդ կիլոմետր»-ում: Ամենուր նա կլինի որդու հետ և ողջ կմնա միայն Աստծո կամոք և պատահաբար: Պատահականությունն էլ է Աստված: Հետախույզների նրանց ջոկատում սկզբում կլինի քսանյոթ մարդ, իսկ վերջում կմնան տասնյոթը. ինքը՝ Մուշեղը, քառասներեքամյա բժիշկը Երևանից և տասնյոթ հոգի քսանամյա տղեկներ, որոնք զինվորական համազգեստի մեջ ավելի մեծ կթվան: Եվ նա ամբողջ ընթացքում կմտածի. «Ո՞նց են կարողանում էս երեխաները կյանքից էսքան բան հասկանալ, որ կարողանում են էսքան խիզախ մնալ»:

Չգիտեր, որ դիրքերից մեկը, որտեղ ինքը որդու հետ կլինի, ութ-ինը ժամ շարունակ կենթարկվի հրետանակոծության: Ձենքը կլինի ամենատարբեր տրամաչափի: Նա չգիտեր, որ Աստծուն շնորհակալ կլինի, եթե հակառակորդը խփի վաթսունմիլիմետրանոց ականանետով: Եթե «Գրադ» ու ԱԹՍ լինեն, նա նույնիսկ չի կարողանա ոչնչի մասին մտածել: Հակառակորդը ԱԹՍ-ները կօգտագործի տարբեր նպատակներով: Դրանք մի քանի տեսակի կլինեն: Օրինակ, կլինեն «նշանառու»-ներ: Դրանցով հակառակորդը պտույտներ կանի դիրքի վերևում, իսկ չորս րոպե անց հրետանին կսկսի անվրեպ խփել դիրքին: Նա չգիտեր, որ այդպես կլինի Ջաբրայիլում, երբ նա կմտածի, թե արդեն մեռել են: Նա էլ ոչինչ չի զգա: Ոչինչ չի տեսնի: Ամենուր կլինի սև ծուխ, նրա վրա քարեր կընկնեն, ինչ-որ բեկորներ: «Վա՛ն, Վա՛ն»,- ձայն կտա որդուն: Եվ երբ որդին կշրջվի, նա կհասկանա, որ ողջ են: Հրետանակոծման ու ռմբակոծման ողջ ընթացքում նրանք կթաքնվեն «ճեղքերում»: «Ճեղքը» գետնահյուղեր են, որջեր: Լայնությունը մեկ մետր է: Այնտեղ նույնիսկ գետնին կարգին նստել չի լինում: Իհարկե, եթե «Գրադը» հենց դրա վրա ընկնի, այդ ճեղքն էլ չի փրկի: Բայց ականանետերից ու բեկորներից «ճեղքերը» կկարողանան փրկել: Մի դիրքը յոթ դիտակետ է, տասը տեղանոց բլինդաժ և տասներկու տեղանոց ճեղք:

Նա այդ ժամանակ դեռ չգիտեր, որ Վանը վիրավորում կստանա Սարուշեն գյուղում, Կարմիր Շուկայից ոչ հեռու: Նրանց առջև կլինի, այսպես կոչված, Դժոխքի Ձորը: Այնտեղ կլինեն յոթ-ութ գյուղ: Նրանք այնտեղ կպահեն գյուղի հրշեջ ծառայության մոտ գտնվող առաջին դիրքը: Եվ հանկարծ կսկսվի ականանետումը: Ականը կընկնի հարևան տանիքի վրա: Նրանք դուրս կվազեն, որպեսզի թաքնվեն մոտակա խրամատի մեջ: Բայց կլսվեն երրորդ-չորրորդ հարվածները, և նրանց կծածկի պայթյունի ալիքը: Դարձյալ ծուխ կլինի, նա ոչինչ չի կարողանա տեսնել: Որդին ու նրա ընկերները կլինեն առջևում և մի կողմ կշպրտվեն, և Մուշեղը նորից ձայն կտա. «Վա՛ն, Վա՛ն...»: Մի քանի րոպե գիտակցությունը կկորցնի: Իսկ երբ ուշքի կգա, ոչ հեռու ընկած որդուն կգտնի և կշոշափի զարկերակը: Միանգամից չի ստացվի դա անել, քանի որ չի կարողանա ետ ծալել հագուստի թևքը: Վանը ծանր վիրավորված և կոնտուզիահար կլինի, բայց Մուշեղին այնուամենայնիվ կհաջողվի շոշափել թույլ, անվստահ, «թելանման» զարկերակը, և նրանք այդ ժամանակ կփրկվեն (բոլոր տասնյոթը) միայն այն բանի շնորհիվ, որ պատահաբար, չգիտես որտեղից այդտեղ կհայտնվի մի բեռնատար և նրանց կտանի դեպի Ստեփանակերտ: Արդեն Ստեփանակերտում նրանք նորից կենթարկվեն ռմբակոծության: Այդ ժամանակ նրանց բեռնատարը այնպես կքոթակվի, որ նրան նորից կթվա, թե մեռնում է: Նրան կթվա, թե ամեն բան կորցրեց: Նրան կթվա, որ ուզում է ձայն տալ՝ Կարի՛ն, Անի՛, Վա՛ն, Մի՛ւշ, բայց դա նրան չի հաջողվի, որովհետև նրանք արդեն չկան:

Եվ ժամանակն էլ չի լինի, ասես երբեք գոյություն չի էլ ունեցել: Չէ՞ որ ժամանակը անհետանում է, երբ ավարտվում է կյանքը: Իսկ նա ոչ մի կերպ չի հասկանա՝ դեռ ո՞ղջ է, թե՞ մեռած: Թե բոլորն արդեն մահացե՞լ են: Ջոհվե՞լ են:

Միայն պոկված ու արյունոտ սիրտն ափի մեջ մեկնելով, ցավից ձայնը կորցրած՝ կշշնջա. «Կարի՛ն, Անի՛, Վա՛ն, Մի՛ւշ»:

Նա ինքն իրեն ձայն կտա ու չի լսի...

Սակայն այդ ամենից ոչ մի բան դեռ Մուշեղին հայտնի չէր: Նա հիմա միայն շտապում էր Ստեփանակերտ՝ մեծ հույս ունենալով, որ կկարողանա կատարել Կարինեին, Անիին ու հորը՝ Վանին տված երդումը:

***

Նա գիտեր, հիշում էր, թե ինչպես այն պատերազմում վերցրեցին Շուշին. նրա հայտնի հայրը՝ Վան Մուշեղովիչը, այն ժամանակ Մուշեղին իր հետ էր վերցրել: Դա լեգենդար օպերացիա էր: Եվ նրան անհասկանալի էր, թե ինչպես այս պատերազմում հակառակորդին հաջողվեց վերցնել այդ բարձրությունը, չէ՞ որ Շուշին անհնար է վերցնել: Չէ՞ որ գրոհ չէր եղել: Բայց նա ռազմական մասնագետ չի: Նա բժիշկ է և քաղաքականությունից, ինչպես ռազմական գործից ոչինչ չի հասկանում:

Մուշեղը երկար ժամանակ պառկած կմնա *հարազատ* երևանյան հիվանդանոցում. նորից սկսի խոսել, նորից կսովորի քայլել, գդալ ու պատառաքաղ բռնել և շարունակ նայել ու նայել, թե ինչպես է պատուհանից այն կողմ գալիս անժամանակ աշունը, իսկ դրանից հետո՝ անժամկետ ձմեռը:

Երևան, 6 հունվարի 2021 թ.

Թարգմանությունը՝
Մարիա ԼԱԶԱՐԵՎԱՅԻ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՀԵՏ

Սերժ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ամեն անգամ Պարույր Սևակի բանաստեղծական արվեստի տաճարը մտնելուց առաջ Վլադիմիր Օդոևսկու խոսքերն եմ մտաբերում. «Պոեզիան նախագուշակն է այն վիճակի, երբ մարդկությունը դադարում է ձեռք բերելուց և սկսում է վայելել ձեռք բերածը»:

Մեծանուն բանաստեղծի պոեզիան էի կրկին վայելում, ցավից ու ներքին տառապանքից ծնունդ առած այդ պոեզիայի հրաշքը: Ու հանկարծ հեռախոսազանգ. իմ ծանոթներից էր՝ Գագիկ Սարգսյանը. «Վաղը կիրակի է, գնանք Ջանգակատուն: Մեղքս ինչ թաքցնեմ, չեմ եղել Պարույր Սևակի տուն-թանգարանում»:

- Անկեղծորեն խոստովանեմ,- ասացի,- ես նույնպես չեմ եղել ու մինչև հիմա էլ չեմ կարողանում ինձ ներել:

Եվ ահա գնում ենք Ջանգակատուն: Մեքենան Գագիկն է վարում: Աշնանային պարզ, արևոտ օր է: Պահեստազորի փոխգնդապետ է 64-ամյա Գագիկ Սարգսյանը, զինվորական թոշակառու: Ճանապարհին կրկին համոզվեցի, որ հետաքրքիր զրուցակից է: Ինձ հիացնում էին նրա անկեղծությունն ու անմիջականությունը, դեպքերի, իրադարձությունների մանրամասները հանգիստ, անկաշկանդ պատմելու նրա բնատուր ձիրքը, համեստ, շարային ձգվածության պահվածքը նրա: Համառոտակի պատմեց իր կյանքը: Շուրջ 40 տարի հայրենիքին ծառայած, իր ուսերին ծառայության ծանրությունը արժանապատվորեն տարած զինվորական մարդու կյանք է դա:

Գագիկը մեքենան արգելակում է Պարույր Սևակի տան բակում: Դիմացը տուն-թանգարանն է: Ասես սրբացած տաճար ես մտել՝ շուրթերիդ մի մաքուր աղոթք: Տուն-թանգարանի պատերին սիրելի բանաստեղծի մեծադիր նկարներն են: Ահա ինքը՝ թուխ մազերով, ասպետորեն գեղեցիկ: Աչքերում՝ իմաստություն ճառագայթող աչքերում հոգու կրակն է շողում: Մեր մշակույթի մեծերի հետ է նկարներում, Մարտիրոս Սարյանի հետ. խոնարհված համբուրում է վարպետի աջը: Ծնողների, կնոջ՝ Նելլիի ու երեխաների հետ... Վերջին նկարներում տխուր է: Դեմքին անքնության, գիշերային ծանր մղձավանջների հետքերն են: Մի այլ նկարում՝ հսկա ժայռաբեկորին նստած խորհում է՝ գլուխն առած ափերի մեջ: Ինչի՞ մասին է խորհում, դժվար է ասել: Նկարներից մեկում մարդիկ ձեռքերի վրա տանում են բանաստեղծի անկենդան մարմինը: Ասես խաչից վար բերված Հիսուսին են տանում: Շնչահատ էի լինում գունդ դառած փղձկոցից: Ասես աքցաններով սեղմում էին կոկորդս: Թանգարանի աշխատակցուհին հավանաբար նկատել էր, որ երկար եմ նայում նկարին, մոտեցավ և կամաց ասաց. «Դրանք այն պահերն են, երբ ավտովթարի զոհ դարձած Պարույր Սևակին դուրս էին բերել մեքենայից...»,- աղջկա ձայնը դողում էր հուզմունքից: Նման ծանր պահեր մեկ էլ Ծաղկաձորում եմ ապրել, անտառային կանաչ մի բացատում, այն բացատում, ուր Չարենցն է ոտք դրել:

Գարուն էր, մայիս: Ես այդ օրերին ՀԳՄ Ծաղկաձորի ստեղծագործական տանն էի հանգստանում: Նախօրեին անձրև էր եկել, և թարմ հողահոտով բուրող բացատի ցողաթաթախ կանաչն արծաթին էր տալիս, ցոլցլում արշալույսների փայլով: Աշխարհի աղմուկ-ժխորից հեռու, միայնության մեջ խորհում էի այն մասին, որ այս խորհրդավոր բացատն իր թավիշներում քանի՞ տարի հանճարեղ բանաստեղծի ոտնահետքերն է պահում, նրա քայլերի շրշյունը: Ես խորհում էի նաև այն մասին, թե դժոխային այն օրերին բանաստեղծի դեմ ահավոր դատաստանից հետո ի՞նչ արին, ո՞ւր տարան նրա հանգած, բզկտված մարմինը: Ժամանակներն այնքան դաժան էին, որ նա գերեզման էլ չունեցավ...

Բացատն ինձ համար սրբավայր է դարձել: Այնտեղ ծաղիկները խիտ են ու վայրի: Ցողերն այնտեղ ամպրոպներից պոկված արցունքի կաթիլներ են: Չարենցը չէր կարող չհմայվել բացատի կուսական գեղեցկությամբ, թեև այդ օրերին հոգեկան ծանր ապրումների մեջ էր: Հասցրե՞ց, արդյոք, գեղեցկությունն այդ լույսի փոխարկել իր տողերում, որ պիտի ջերմացնեին մարդկանց սրտերը:

Չարենցն իմ կուռքն է, ինչպես Թումանյանն ու Պարույր Սևակը:

Ասում են, խիստ վտանգավոր է, երբ մարդը հասնում է արձանի սառնության: Թումանյանի, Չարենցի, Պարույր Սևակի, մեր մյուս մեծերի բանաստեղծական արվեստի տաճարը մտեք, օծվեք այնտեղ աստվածային մաքրությամբ ծփացող լույսերով, և դուք, համոզված եմ, կձերբազատվեք այդ սառնությունից... Դուք կմաքրվեք, կբյուրեղանա՞ք ու մանկան աչքերով կնայեք աշխարհին, ինչպես ձեր խոնարհ ծառան, որ հիմա մեծ բանաստեղծի տուն-թանգարանի սրբացած պատերի մեջ փոշուց մաքրել իր հոգու հայելին, հասել է լեռնաղբյուրային զուլալության...

...Պարույր Սևակի գրասեղանն է՝ պարզ ու հասարակ: Գրքեր են գրասեղանին, «Արձագանք» շաբաթաթերթի 1887 թվականի համարները, օրացույցն է, գրամեքենան, փայտե գրչակալը, մոխրամանն ու կրակայրիչը: Ես ուզում էի ձեռք տալ, դիպչել այդ ամենին, որոնց վրա բանաստեղծի մատնահետքերն են: Ցուցափեղկերին նրա գլուխգործոցներից մեջբերված հանճարեղ խոհերն են՝ բանաստեղծական տողերի տեսքով: Հայացքս կանգ առավ հետևյալ տողերի վրա.

...Այդ ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը,
Որ չի ավարտվել ու չի՛ ավարտվում.
Կարմիր էր, հիմա ճերմակ է դարձել...
...Ուստի վախեցեք սպանդից ճերմակ
Ավելի, քան թե եղեռնից կարմիր...

Ահազանգ է սա, տագնապի զանգ, որ բանաստեղծը հնչեցրել է ավելի քան կես դար առաջ:

Ես այն ժամանակ Բաքվում էի ապրում: Աշխատում էի հայերենով հրատարակվող «Կոմունիստ» հանրապետական թերթի խմբագրությունում, նամակների բաժնի վարիչն էի: Մի կին էր եկել խմբագրություն, հազիվ էր քայլում: Եկել ու պատմում էր, որ իրեն հալածում են, մինչև անգամ զրկել են թոշակից, պատերազմում զոհվածի այրուն զրկել են ապրուստի միակ միջոցից: Եվ հաշմանդամ այդ կինը պիտի սովամահ լիներ: Խմբագրությունը, իհարկե, օգնեց, վերականգնվեց Արփենիկ Միրզոյանի թոշակը: Մինչև հիմա էլ այդ կնոջ աչքերն եմ հիշում, մորմոքից մխացող աչքերը... Ես եղել եմ նրա տանը: Ուր նայում էիր, գրքեր էին՝ սեղանին, մահճակալին, լուսամուտի գոգին՝ հայկական, մեր դասականների հատորները: Պատին Արարատ լեռան նկարն էր: Բաքվում, որի երակներով միջնադարյան բարբարոսության սև լավան էր հոսում, հանկարծ սուրբ լեռան նկա՞րը... Ես Արփենիկ մայրիկի միջոցով եմ ձեռք բերել Պարույր Սևակի «Եղիցի լույսը» և Զորի Բալյանի՝ այն ժամանակ արգելված «Օջախը»: Հայաստան տեղափոխվելուց հետո փնտրել եմ այդ կնոջը, երկար եմ փնտրել՝ փախստականներով վերաբնակեցված շրջաններում, ամենուր, չեմ գտել սակայն: Ու այդպես էլ չիմացա՝ ի՞նչ պատահեց նրա հետ, ճակատագրի ահեղ հողմը ո՞ւր նետեց Արփենիկ մայրիկին, որ խեղճ էր ու անհայրենիք:

Բաքվում ապրող մեր հայրենակիցներից շատերն են Արփենիկ Միրզոյանի դառը ճակատագրին արժանացել. նրանց աշխատանքից ազատում էին, զրկում թոշակից, դուրս հանում իրենց հին, պապենական տներից: Բաքվում, այո՛, վաղուց էր սկսվել, դեռ մինչև Արցախյան շարժումը, հայերի դեմ կատարվող ճերմակ նախճիրը, որի մասին Պարույր Սևակը դեռևս 60-ական թվականներին էր ահազանգել:

...Քարոտ կածանը բանաստեղծի տան բակից իջնում է տնամերձ այգին, ուր Պարույր Սևակի աճյունն է ամփոփված: Աշունն իր ծիածաններն է վառել հովերից խշշող ծառերի ճյուղերին: Խնձորի, սերկևիլի, մասուրի հոտն է տարածվել այգում: Շատ մոտիկից ջրի գլգլոց է լսվում: Քիչ հետո խոտերի միջից ելնող արծաթե ձայնը փոխվում է զնգոցի: «Ի՞նչ բույրեր են, ի՞նչ գույներ: Ես այգու հետ գիշերը կմնայի արթուն»,- ասաց Գագիկն ու քայլեց դեպի աշնանային կրակներով ցոլացող մասրենին, սկսեց հայացքով տնտղել, շոյել տերևները: Երբ իմացա, որ մասրենին Պարույր Սևակն է տնկել, ինձ թվաց, թե նրա տերևների թրթռոցներում շունչն է բանաստեղծի:

...Ես այդպես էլ չիմացա, թե ինչպես մատներս հպվեցին նրա ցուրտ շիրմաքարին: Չիմացա, թե ինչպես իմ աչքերի դեմ լույսը սևեր հագավ... Քարացել, համրերի ճիչ եմ դարձել բանաստեղծի շիրմի առաջ: Գրանիտե սև ժայռաբեկորի տակ Պարույր Սևակի հանգած կյանքն է: Շուրթերիս բանաստեղծական տողեր են թրթռում.

Ես թռրման կոչվող աղավնու նման
Անկումներում եմ բարձրանում վերև՝
Ուրախացնելով գուցե շատերին...
Իր փողերն են:

1971-ի հունիսյան այն սև օրը ճակատագրական եղավ անկումդ: Եվ դու այլևս չկարողացար բարձրանալ վեր՝ շարունակելու վսեմ, փառահեղ քո թռիչքը աստվածային բարձրություններում: Ու այդպես էլ չիմացանք, թե ինչ պիտի ասեիր վերջին պահերին: Չիմացանք անդարձ հեռանալուդ գաղտնիքը: Ո՞վ կբացի այն:

...Երբ ուզում էինք հրաժեշտ տալ, ինձ թվաց՝ ուր որ է թեթևակի կճռնչա ու կբացվի բանաստեղծի տան փակ դուռը, և շեմին կերևա ինքը՝ Պարույր Սևակը՝ հայրենի հերկերի թուխը դեմքին, և ես կտեսնեմ նրան՝ կենդանի, կլսեմ նրա ձայնը, կապրեմ մեծ բանաստեղծի հետ առաջին հանդիպման անհուն բերկրանքը: Սակայն հրաշքն այդ չիրականացավ: Ու ես, աշնանային արևոտ օրն առել հայացքիս մեջ, Ջանգակատան լազուր երկնքին էի նայում, որ շողում էր լուսնաքարե գմբեթի նման, նայում էի գյուղից վերև, երկնակապույտի մեջ սուզված սարերին, ուր բանաստեղծի ուրցի ծաղիկն է թփերի տակ ծվարած թախծորեն բուրում:

«Մեր պարտքն է մասունք առ մասունք հավաքել, ամբողջացնել «Անգիր Սևակի» առօրեական և աստվածային կերպարը և հանձնել սերունդներին». Համո Սահյանի այս խոսքերը թող դառնան սրբազան պատգամ մեզնից յուրաքանչյուրի համար:

Հանդիպում Հովսեփ Նալբանդյանի հետ

Հայ-ռուսական համալսարանում հեռավար հանդիպում տեղի ունեցավ ամերիկահայ գրող, հրատարակիչ, մատենագետ, թարգմանիչ, մանկավարժ և հետազոտող գիտնական Հովսեփ Նալբանդյանի (Յովսեփ Նալպանտեան) հետ:

Նա ամենայն մանրամասնությամբ ներկայացրեց իրավիճակը ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ աշխարհում՝ սկսած մերձավոր Սփյուռքից (Վրաստան, Իրան, Սիրիա, Լիբանան) մինչև հեռավոր Լատինական Ամերիկա և Ավստրալիա: Տպավորությունը բանախոսությունից ուժեղ էր, քանի որ այն առատ էր տեղեկություններով և հատկապես փաստերի թարմությամբ: Հատուկ անդրադարձ եղավ հայապահպանության առաջին պայմանի՝ հայկական ամենօրյա դպրոցների փակման փաստին և կարևորվեց նոր դպրոց ունենալու խնդիրը: Առանձին վերցրած՝ օտարության մեջ ապրող հայ մարդու հոգեբանական, սոցիալ-բարոյական խնդիրները, աշխարհի մարտահրավերների առաջ նրա մենակ լինելը և, իհարկե, զուտ ֆիզիկական գոյության պահպանման համար կռիվը, նրան շատ արագ մղում է ազգային նկարագրի կորստի հետ համակերպմանը: Այս հարցում հայի օգնականը և կողմնորոշողը պետք է լինեն բարեգործական և բարեսիրական կազմակերպությունները և հայոց պետությունը: Բարեգործական և բարեսիրական ընկերությունները, ցավոք, ոչ միայն այդքան ուժ և զորություն չունեն, այլ հաճախ նաև՝ ցանկություն ու շահագրգռություն, քանի որ Սփյուռքը մասնատված է ոչ միայն երկրների սահմաններով, այլ նաև կուսակցական, խմբային շահերով:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ էլ ամեն ինչ չէ, որ ճիշտ է արվում և ամեն ինչ չէ, որ Սփյուռքի հարցում կանոնակարգված է: Հայաստանը փոքր և ոչ հզոր երկիր է, չի կարող նյութական և բարոյական լուրջ օգնություն ցուցաբերել, և եթե ինչ-որ բան արվում է օգնության նպատակով, ապա դա էլ տարերային է և սուղ՝ ներկա իրավիճակում փոփոխություն մտցնելու համար:

Բանախոսությունից հետո Հովսեփ Նալբանդյանին ամբիոնի աշխատակիցները հարցեր տվեցին, քննարկեցին խնդիրներ և իրավիճակին առնչվող առաջարկներ եղան:

Ժենյա ՌՈՍՏՈՄՅԱՆ

ՌԵՋԵՓԻ ՄԻԱԿ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԶՐՈՒՅՑԸ ԵՐԿՆԱՅԻՆ Դ ԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

(Քաղաքական պամֆլետ)

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երբ նրան բերում էին, երևում էր, որ չի հասկանում, թե ուր է ընկել… Կարծում էր, հիմա բոլորը, գլուխները խոնարհած, աջ ձեռքերը կրծքին սեղմած պետք է շարժվեն իր ցուցամատի ուղղությամբ: Բայց չէ՛, այդպես չեղավ: Երկու կողմերում հավաքված շեյթաններն ու բարի ոգիները մի ակնթարթում խառնվեցին, դարձան հետաքրքրասերների ամբոխ՝ ճիշտ և ճիշտ երկրային կյանքում իրարից առաջ խցկվող լրագրողների պես: Շեյթաններն իրենց ճուտերով արդեն անհամբերությունից շուրթերն էին կրծոտում, ծուռտիկ ոտքերով դոփում, նրա հետույքն էին ճմկտում, մեկ-մեկ էլ նույնիսկ ճլթթացնում: Իսկ բարի ոգիներն իրենց հոգածու, օգնության հասնելու քնքշագին, պատրաստակամ երթուգալով փորձում էին ետ վանել նրանց:

- Ոչինչ,- աչքերը խոլորելով վերջիններին հանգստացնում էր Ռեջեփը,- սրանք դեռ չգիտեն, թե ով եմ ես:

- Վրայից պոկված ճերմակ սավանով փորձում էր ծածկվել, ձգում էր վիզը, որ երևա իր բարձր հասակը, թեև այս վերուվար ցատկոտող արարածների մեջ դա ուղղակի անհնար էր: Համոզված, որ հենց սկսի իր ոգեշունչ ճառը Մեծ Թուրանի, իսլամի աշխարհացունց հաղթանակների ու հաղթարշավի մասին, բոլորը ափիբերան, շունչները պահած ընկնելու են իր հիպնոսի տակ, և ինքը խոսելու է՝ Ալլահից ներշնչված: Հիտլերի նման նա էլ համոզված էր, թե ինքն է այն առաջնորդը, որ իր ընտրյալ ժողովրդին տանելու է չարի դեմ արշավանքների: Այս հայերն ու քուրդերը նույնպիսի «ունիվերսալ սատանայական գործակալություն» են, ինչպիսին ֆյուրերի համար հրեաներն էին: Ինքը նույնպես, Հիտլերի նման, պահանջել էր իրեն երիտասարդ ցուլի սերմնահեղուկ ներարկել, բայց բացատրել էր, թե դրանով անվախ ու կատաղի առաջնորդի և ոչ թե սեքս ռումբի հատկանիշներ է ուզում ձեռք բերել… Հիմա էլ էր կատաղի… Ուզում էր վռնդել այս անհասկանալի խաժամուժին, որ տիզի պես կպնում, պոկ չէին գալիս: Հանդարտվելու կոչող նրա ծափերը խլանում էին ախորժելի ու անախորժ ձայների ժխորից: Աջ ձեռքի լռեցնող շարժումները ոչինչ չարժեին: Հրվում էր ինչ-որ ուղղությամբ, որտեղից աննկարագրելի պայծառ լույսի հետ զգլխիչ անուշաբույր էր հորդում… Շեյթանները, այս լույսից, բույրերից ու հրեշտակաձայն երգերի մեղմությունից խրտնած, ետ-ետ սկսեցին քաշվել… Բարի ոգիները նրան անվնաս հասցրին մի վայր, որտեղ այլևս չէր կարողանում շուրջը նայել… Ինքը այսքան հզոր լույսի կարիք երբևէ չի ունեցել, ինչի՞ն է պետք… Բռունցքով շփեց աչքերը:

- Բերեցի՞ք իմ թանկագին զավակ Ռեջեփին,- հնչեց Գաբրիել Հրեշտակապետի մեղմանուշ ձայնը: Նա բարի ժպիտով սղալում էր իր ոսկեհուռ մորուքը:

- Դու ո՞վ ես, ինչո՞ւ ես այդպես քաղցր ժպտում, մտքիդ ի՞նչ կա,- կասկածը արդեն վախեցնում էր նրան, բայց հոխորտաց:- Գիտե՞ս, թե ում հետ ես կանգնած դեմ հանդիման:

- Գիտեմ, զավա՛կս, իհարկե գիտեմ, դու Ռեջեփն ես: Իսկ ես, դե, Ջաբրայիլն եմ, Ղուրանից պետք է իմանայիր: Հոգևոր ճեմարան ես ավարտել: Գործերս շատ էին, անձամբ չկարողացա գալ քո ետևից: Դու արդեն պատմության մեջ ես՝ քո հանցանքների ու ոճիրների, երկրներ, ցեղեր, բազմադարյան հնավայրեր ու հուշարձաններ ոչնչացնելու համար… Սա՛ էր ուզածդ: Երևի քեզ էր վիճակված մսխել այդ հին, խղճուկ զինանոցի վերջին փշուրները, քանի որ մարդկության զարգացման նոր փուլում հնաբույր այդ զենքերը մոլորակին այլևս պետք չեն:

Ռեջեփն սկսեց ծիծաղել (վաղուց չէր ծիծաղել)՝ մեծ ճիգ գործադրելով, որ իր ծիծաղը դիվային քրքիջի վերածվի: Նա այսպես էր վախեցնում իր կնոջն ու գեներալներին.

- Իմ զինանոցներում, երևի չգիտես, դեռ ինչքան զենք ու զինամթերք ունեմ ու թե դեռ ինչե՞ր եմ քանդելու դրանցով:

- Խոսքը այլ զենքերի մասին է՝ մեծամոլության, դաժանության, ստախոսության…

Ռեջեփի ճիվաղային ծիծաղի համար բացված թանկարժեք ատամնաշարի տեսքը ակներևորեն սպառում էր ներկաների երկնային համբերությունը:

- Քո մարդաբանական ուսումնասիրությունների ժամանակ հանդիպե՞լ ես սրա նմանին,- ոսկեհուռ մորուքի միջից ժպտում էր Գաբրիելը: Դա շատ էր զայրացնում Ռեջեփին:

Լոմբրոզոն, ում դիմել էր Հրեշտակապետը, առաջ թեքվեց իր գահավորակի վրա և նույնպես ժպտաց Ռեջեփին.

- Քեզ մեծ դժվարությամբ կարողացանք պոկել հոգեբույժներիդ ու մյուս բժիշկներիդ հոգատար ձեռքերից: Բայց հետո բոլորը միանգամից խորը շունչ քաշեցին: Հիմա հանգիստ խղճով կվայելեն խելացնորությունդ բուժելու վրա ընտանիքիդ զուր մսխած փողերը,- և դարձավ Հրեշտակապետին:- Ո՛վ Գաբրիել, դու շատ լավ գիտես, որ բոլոր դարերում էլ եղել են, և բոլորս ամեն ջանք գործադրել ենք, որ սրանք չվերանան աշխարհի երեսից, այլ՝ վերափոխվեն:

Ռեջեփը նույնիսկ չփորձեց թաքցնել իր կատաղությունը.

- Էդ ի՞նձ եք ուզում վերափոխել: Ինձ, որ Քասըմփաշայում ու… ու Ստամբուլի այլ անբարո թաղամասերում սիմիթ ու չայ ծախողից կարողացա ինձ վերափոխել, բարձրացնել, բարձրանալ մինչև…

- Գողից, սովորական խաբեբայից մինչև ոճրագործ, մինչև ցեղասպան,- նրա միտքը շարունակեց նարնջագույն ծաղիկների փնջերի մեջ ժպտացողը: Իսկ Գաբրիելը չէր դադարում բարի, մեղմ ժպիտով ժպտալ: Նա նորից շոյեց ոսկեհուռ մորուքն ու խոսեց.

- Քեզ հետ Մեծն Վիշնուն է խոսում:

- Կարծում ես, վախեցա՞ նրա աչքերի էդ ոսկե պեծերից: Գիտե՞ս՝ ինչ ֆոսֆորային ռումբեր են թափվել իմ հրամանով:

- Մոռացել էիր, թե ինչի՞ համար ես մարմնավորվել այս անգամ… գնացել էիր իբր քո նախնիների, նաև Էնվերի հոգու ահռելի չափերի կարման մաքրես: Իսկ դու ի՞նչ արեցիր:- Այս խոսքերը Մեծն Վիշնուն արտաբերում էր քաղցր ժպտալով, առանց քինախնդրության նշույլի:

Ռեջեփը մի պահ կորցրեց հավասարակշռությունը, բայց սովոր էր վայրկենապես տիրապետելու իր խռովքին, շատ անգամ էր ինքն իրեն ու բժիշկներին հավատացրել, թե կրկնվող ուշաթափությունները ռոպեական թուլություն են: Չարչարվում էր, որ գուցե քնի ու նորից զարթնի: Բայց Հրեշտակապետը սպասում էր, նույնիսկ խրախուսում էր, որ խոսի.

- Դե, պատմի՛ր տեսնեմ, կարողանո՞ւմ էիր քնել էն ամենից հետո, ինչ ամեն օր լսում էիր քո հավատարիմ ծառաներից, շերբեթ խմելով դիտում էիր քո հրամանով կործանված քաղաքների ու գյուղերի զարհուրելի տեսանյութերը…

- Հա՛, քնելուց առաջ անպայման պետք է նայեմ էդ բոլորը, հանգստանամ, որոշեմ հետագա անելիքներս:

- Հանգստանա՞ս… Ստերիդ կծիկը բացեցիր, զավա՛կս, բայց չգիտես, թե ո՞ւմ ես պատմում հեքիաթներդ… մեկին, որ ամեն ինչ գիտի,- Հրեշտակապետը էլի ժպտում էր:

- Ես քո զավակը չեմ, ոչ էլ իմ հոր՝ էդ խեղճուկրակ Ահմեդի զավակն եմ… Ես իմ մեծ, թուրք ժողովրդի զավակն եմ:

- Էդ քո ո՞ր ժողովրդի, Ռեջե՛փ, այն միլիոնավորների՞, որոնց տան երեխաները վերմա՞կ էլ չունեն ձմռանը ծածկվելու: Եթե մինչև ամառ դիմացան՝ դիմացան: Էն, որ ցերեկը մուրում, իսկ գիշերը կիսաքա՞ղց են քնում:

- Ինչե՞ր ես խոսում, իմ հզոր Թուրքիայում, որ աշխարհում ամենահզորներից է, սոված, անվերմակ մա՞րդ կա, ասում ես: Մեր պապերը էնքան յորղան ու բարձ են հավաքել գյավուրների տներից, որ մի քանի սերնդի հերիք կանի: Հինգ երեխեքով մեր մեծ, նախշուն յորղանի տակ ենք մեծացել: Էնքան սիրուն է: Տարսոնի ամենահարուստ հայի տնից է հանված: Պահել եմ: Շուտով կբացվի Բեյօղլուի տունթանգարանս, կարգադրել եմ՝ էնտեղ ցուցադրեն:

- Շուտով,- Գաբրիելը նորից շոյեց ոսկեհուռ մորուքը, շարունակեց բարի, առեղծվածային ժպիտով ժպտալ:- Ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ սրանք վերամարմնավորվեն:

- Սա նրա վերջին վերամարմնավորումն էր,- ասում էր Վիշնուի՝ նարնջագույն ծաղիկների կողմից հորդող պայծառակերպ, խորհրդավոր ժպիտը:

- Ռեջեփը ճիշտ և ճիշտ քո նկարագրած տիպաբանական ոճրագործ, ցեղասպան տեսակն էր ներկայացնում,- դիմեց Հրեշտակապետը 19-րդ դարի մեծ մարդաբան, քրեագետ, հոգեբան Լոմբրոզոյին:- Հոնքատակերը ուռած, խոսելիս ծնոտը դողում է, ավելի է մեծանում… նեղ ճակատ… Բայց,- հանուն արդարության ինքն իրեն ուղղեց,- ճակատը այնքան էլ նեղ չէ:

- Շատ նեղ է, եթե նայենք աշխարհը վերաձևելու նրա բռնած գործի զառանցական ծավալներին,- արձագանքեց Վիշնուն:

- Բայց,- ոսկեփալ մորուքը շոյեց Հրեշտակապետը- մինչև այստեղ գալը աշխարհը հաշվի էր նստում սրա հետ, մի ռուս մեկնաբան նույնիսկ «լավ դիվանագետ» և «նուրբ հոգեբան» անվանեց սրան, համարվում էր տարածաշրջանի փայլուն քաղաքագետներից մեկը: Աստծո այս արարածը չգիտեր, որ խաղալիք է աշխարհի հզորների ձեռքին, կարծում էր՝ ինքն է բոլորին մատների վրա խաղացնում:

- Ինչո՞ւ ես իմ մասին անցյալ ժամանակով խոսում, լա՞վ կլինի՝ ես էլ քո մասին անցյալ ժամանակով խոսեմ:

Ներկաները համերաշխ ծիծաղեցին:

- Բայց ինքը ի՞նչ մեղք ունի… ատավիզմի զոհ է,- ճոճաթոռի հետ առաջ եկավ Լոմբրոզոն:- Տեսե՛ք, պոչուկի ելուստը երկարում է, փշաքաղվել է ամբողջ մարմնի առատ մազածածկույթը: Ամեն ինչից երևում է, նա ոչ միայն չի հասել էվոլյուցիոն նոր փուլին, այլև դրա հետ որևէ կապ չունի…

- Վերջերս հրամայել էիր, որ քեզ այլևս ցույց չտան տեսաֆիլմերը: Երազումդ քուրդերի, հայերի փոխարեն, զինվորներդ թոռանդ ականջներն էին կտրում, մորթում էին տատիդ ու պապիդ, սիրելի Թենզիյե մայրիկիդ՝ այդ բարի, քաղցրաշուրթ կնոջը…- նորից խոսեց Հրեշտակապետը:

- Մորս բան չասե՛ս, նա իմ աստվածուհին էր: Լավ է, նրան մինչև 83 տարեկան թագուհու պես պահեցի, ուսս նրա դագաղի տակ դրեցի: Մենակ չասե՛ք, թե նրա մեջ հայի արյուն է եղել, սուտ խոսքեր են, չեմ հանդուրժի:- Ռեջեփի աչքերի զայրացած փայլը պղտորվում էր գլոր-գլոր արցունքներից:

- Լողանում էիր զոհերիդ արյան մեջ,- շարունակում էր Հրեշտակապետը,- փեսայիդ շատ հաճախ տեսնում էիր հոհոացող զինվորներիդ կողմից բռնաբարվելիս:

- Բայց աղջիկս՝ Եսրաս, չէր նախատում, այլ ասում էր. «Ոչինչ, աթա՛, դու քո գործին կաց, դրան չոռ չի կպնի»: Իսկը իմ կտորն է քյոփեկը: Ո՞նց եմ սիրում դրան…

Գաբրիելը սղալեց իր ոսկեհուռ բեղերն ու շարունակեց.

- Բիլալ որդիդ շատ հաճախ՝ ֆոսֆորային ռումբերից այրվածքներով, վրադ էր նայում…

Ռեջեփը բռունցքով շփում էր ակնախոռոչը, կարծես փուշ էր ուզում հանել այնտեղից:

- Բայրամի գիշերը քո Էմինե Գյուլբարանին տեսար գարշահոտ զինվորիդ գրկում, կատաղած վեր թռար, բարձիդ տակից հանեցիր ատրճանակը, փշրեցիր ննջասենյակիդ միլիոնանոց ջահը: Կրակոցից Էմինեդ վեր թռավ: Ասաց, որ նույն երազը ինքն էր տեսնում…

- Թե ինչերի՞ց էր պետք ննջարանում ջահ: Գյուլբարանի ճաշակն է, արաբ հոր տանը ի՞նչ ախմախություն երազել է, պիտի ունենա հենց հիմի…

- Քո մյուս երազում քուրդը ականջներդ էր կտրել, անցնում էր մյուս անդամներիդ: Ահուսարսափից քրտինքի մեջ կորած՝ գոռգոռում էիր: Գյուլբարանդ քեզ փրկեց, տեսավ՝ ապտակելը չի օգնում, իրենից անբաժան մտրակով խփեց դեմքիդ, արթնացար:

- Էդ բոզի աղջկան էն շան օրը գցել տվի, որ էլ չուզեց մտրակ պահել: Լավ է՝ դրանից առաջ աղախինը գտել էր բարձի տակ պահվող ատրճանակը: Մի ծեծ էլ դրա համար էր կերել:

- Զինվորներիդ Ջաբրայիլում հայտնվելու օրը եկա՞ քո երազում այն պահին, երբ բռնաբարված աղջկաղ՝ Սումեյեի դիակի վրա ողբում էիր…

- Էդ դու էիր, հա՛… Ամբողջ էությունովս զգացի, որ կողքիս սուրբ է կանգնած, ուզում է ինձ մխիթարի:

- Ուզում էի քեզ խելքի բերել:

Շարունակությունը՝ էջ 8

ՌԵՋԵՓԻ ՄԻԱԿ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԶՐՈՒՅՑԸ ԵՐԿՆԱՅԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Սկիզբը՝ էջ 7

Վիշնուն արդեն ձեռքն էր առել սրինգը, և նրա քաղցրահունչ, հրեշտակային հնչյունների մեջ Ռեջեփն զգում էր, թե ոնց է փափկում, հալչում: Թափ տվեց իրեն ու հոխորտաց Հրեշտակապետի դեմքին.

- Ես էլ համոզված էի, թե եկել ես ինձ ուժ տալու, որ հանկարծ չթուլանամ, հանկարծ չտրվեմ ինչ-որ խղճահարությունների: Պատերազմ է, ինչ խիղճ, ինչ բան:

- Իսկ ինչ է ասում Ղուրանը…- իր հետ լույսի մի նոր փունջ բերելով՝ առաջ եկավ Աբու Բաքրը, որ Մարգարեի կենդանության օրոք նրա մերձավորն էր, բոլոր իսկական հավատացյալներին հայտնի՝ իր բարի գործերով ու արդարամտությամբ:- Սուրբ Ղուրանն ասում է, Ռեջեփ,- խոսեց համեստափայլ Աբու Բաքրը,- «Նա, ով հույս ունի, թե կհանդիպի իր Տիրոջը, թող արդար գործեր կատարի և բացի իր Աստծուց, ոչ մեկին չերկրպագի»: Իսկ դու ու քո բոլոր մերձավորները երկրպագում եք ***Փող, Ձենք, Փառք*** աստվածներին:

- Վա՛յ, ո՛վ Աբու Բաքր, դու է՞լ ես էստեղ՝ էս… էս ինձ չհասկացողների հետ: Ինչո՞ւ ինձ հենց իրեն՝ մեծ Մարգարեի մոտ չտարար: Նա ինձ կհասկանա, Նրա անունով եմ գործել միշտ:

- Այո՛,- նորից խոսեց Աբու Բաքրը:- Դեռ դպրոցում փորձում էիր բարեպաշտ մահմեդականի դիմակի տակ թաքցնել արատներդ՝ գող, խաբեբա էիր դպրոցից դուրս, ստախոսության համար դնքսում էր քեզ աստվածավախ հայրդ, բայց օգուտ չուներ, անգամ քո տնից էիր բաներ թոցնում: Մտադիր էիր բարեպաշտ պապիդ նման իմամ դառնալ, բայց հասկացար, որ բնածին հակումներդ քաղաքականության մեջ գործի դնելն ավելի շահեկան է:

- Նվագի՛ր սրինգդ, ո՛վ Վիշնու, քանի դեռ չենք հոգնել սրա բարբաջանքներից,- հորանջեց Հրեշտակապետը:

- Էլ չե՞ս ժպտում, էլ քո զավակը չե՞մ, հա՞- քմծիծաղով Գաբրիելին նայեց Ռեջեփը:

-Թո՛ղ սրինգդ,- մտափոխվեց Հրեշտակապետը,- ավելի լավ է՝ իմ այս կորսված զավակի համար շարադրես մարդկությանը սպասվող հայտնատեսությունդ:

- Ես ուզում եմ վստահեցնել,- սրինգը մի կողմ դրեց Վիշնուն,- որ մարդկությունն ընդհանուր առմամբ պատրաստ է իր գիտակցությունը փոխելու ճանապարհով անցում կատարելու Նոր Դարաշրջանին: ***Հեպդարձի կետը հաղթահարված է***: Հիմա խիզախություն է անհրաժեշտ:

- Խիզախություն: Տեսնո՞ւմ եք, ես ճիշտ եմ,- լսվեց Ռեջեփի խզված ձայնը:

- Այսպես սրա ձայնը խզվել էր 2017 թվականի ընտրարշավի ժամանակ,- հիշեց Աբու Բաքրը,- ու սա ստիպված հրաժարվեց Վանի ու Էրզրումի գավառներում իր ելույթներից: Նրան հուշում էի, որ դա Ալլահի նշանն է, թե այս տարածքներում, որ հայերինն է, իրավունք չունի խոսելու, բայց սա ե՞րբ է Ալլահի նշանները բանի տեղ դրել:

Վիշնուն շարունակեց իր ուղերձը.

- Նոր Դարաշրջանին բնորոշ կլինեն հանդուրժողականությունը, ազատությունն ու անկախությունը:

- Բա ասածս ինչ է: Անհավատները պետք է հանդուրժեն իմ բոլոր քայլերը, թուրք ժողովրդի ազատ կամքը:

- Եվ երեկվա կենսակերպի դիմոզավրերը ստիպված կլինեն լքելու համաշխարհային թատերաբեմը:

- Հա՛, էլի, իսկ էդ հայ դիմոզավրերը ոչ մի կերպ չեն ուզում հեռանալ համաշխարհային թատերաբեմից, որ մեր նախապապ Օսմանից սկսած՝ արյունքրտինքով ենք ներկել:

- Ամենայն առաջադեմ բան, որ չի հակասում Աստծո օրենքին, սկզբունքներին ու մեթոդներին, այսուհետև դրական մտածողության համամոլորակային ցանցով լույսի արագությամբ կտարածվի երկրագնդով մեկ: Մուտքագրվող անունը կլինի՝ Նոր Դարաշրջան, գաղտնաբառը՝ «Գիտակցության նոր մակարդակ»:

- Լսեցի՞ր, զավակս, Մեծն Վիշնուին:

- Ասացի, որ ինձ հեչ պետք չի քո զավակը լինել, ես թուրք մեծ ժողովրդի զավակն եմ:

- Դու նա ես,- հանդարտ, իր ասածի ծանր կշիռն իմանալով ու սրտի խորը ցավով ևս մեկ անգամ միջամտեց Աբու Բաքրը,- դու նա էիր, որ չէր թողնում իր ժողովրդին գլուխը հողից բարձրացնել: Քո ժողովուրդը, օրը մի քանի անգամ, Մուհամեդից պետք է ծնկաչոք ներողություն խնդրի, որ քեզ ու քո նմաններին լույս աշխարհ է բերել: Էդ ինչե՞ր էիր անում Ալլահի անունով, ինչո՞ւ չէիր ծաղկեցնում երկիրդ, ուրվականների երկիր էիր դարձրել: Սպանդ էիր անում ամեն տեղ, ուր ոտքդ դնում էիր: Մեր Ալլահն ասել է, որ անմեղ արյուն թափողը դժոխքի բաժին է: Դու ու քո կամակատարները վաղուց խառնել եք հալալն ու հարամը:

- Արդեն ամոթի պես մի բան է հայտնվում դեմքին,- խոսեց Հրեշտակապետը,- կարո՞ղ ենք հուսալ, թե սա զղջալու է իր արածների համար:

- Ի՞նչ ամոթ, ի՞նչ զղջալ,- փորձում էր հոխորտալ Ռեջեփը, կարծես իսկապես առաջին անգամ էր լսում «ամոթ» և «զղջալ» բառերը, բայց Աբու Բաքրը լռեցրեց նրան.

- «Ամոթի զգացումը բարիք է իր ամեն ձևերի մեջ»,- ասում է մեր սուրբ Ղուրանը և էլի ասում է. «Ամոթ ունենալը հավատի նշան է»: «Ամաչե՛ք Ալլահից հարկ եղածի պես»: Բայց քեզ ամենահարմարը սա է, Ռեջե՛փ, որ ասել է մեր սուրբ Մարգարեն (խաղաղություն նրան և օրհնություն Ամենակալին). «Եթե ամոթ չունես, արա՛ ինչ ուզում ես»:

- Ինչի՞ ես ուրանում, ո՛վ Աբու Բաքր, ես չէի՞, որ ներողություն խնդրեցի էդ քուրդ ալիևներից 37 թվի Դերսիմի ջարդերի համար:

- Երևի քո արած ջարդերի համար էլ քո հաջորդներն են ներողություն խնդրելու,- իրեն զսպելու անհաջող ջանքերից սրտնեղեց Աբու Բաքրը:

Հանկարծ շուրջը բոլոր գույները փոխվեցին: Վիշնուն շուրթերին էր մոտեցրել սրինգը: Մեղեդին միանգամից ձուլվեց թափանցիկ լույսերին, կերպարանափոխվեցին ներկաները: Գաբրիել Հրեշտակապետի ոսկեհուռ մորուքը, վարսերը, ոսկեգույն աչքերը բարությունից զատ նաև կարոտ էին սփռում ամենուրեք… Կարոտ մի շատ կարևոր բանի…

Շողարձակումները մանրիկ մարգարտյա գնդիկների պես խայտում էին…

Ռեջեփը շփոթվել, կանգնել էր անորոշ ու անպտուղ գորշ ամպի նման: Թաքնվելու տեղ չէր գտնում: Ուր որ է՝ կուրանալու էր… Բոլորի հայացքը հառվել էր դեպի վեր, որտեղից իջնող լույսը գերակշիռ էր նույնիսկ բոլոր այս շքեղաշուք լույսերից… Ռեջեփը բռունցքներով, ինչպես փոքր ժամանակ արցունքներն էր սրբում, երբ իրեն ծեծում էին վատահամբավ թաղերի աֆրիկյան գնչուները, գողանում իր վաստակած դուրուշները, շփում էր աչքերը, որ չբացվեն, բայց հետն էլ շատ էր ուզում նայել վեր՝ բոլորի հայացքի ուղղությամբ: Վախով բաց արեց աչքերը… տեսավ Նրա՝ Տիրամոր իջնելու պահը… Փորձեց դողացող ծնկները միմյանց սեղմելով պրկվել, չփլուզվել: Չկարողացավ: Ծնկի ընկավ: Տիրամայրը մոտենում էր իրեն: Ռեջեփը չգիտեր՝ ոնց անի, որ հայացքը կտրի նրանից: Տեսնում էր, թե որքան ամոթ է Նրա հետ նույն հարթության վրա մնալը, բայց փախչելու տեղ չկար: Տիրամայրն իր գորովագութ ձեռքը երկարել էր, որ դնի Ռեջեփի ճաղատացող գլխին:

- Մի՛ վախենա,- ասում էր նրան:

- Չեմ վախենում,- դողդողաց նրա կոկորդը,- միայն թե այս մեծ լույսը կուրացնում է ինձ: Քեզ չեմ կարողանում տեսնել, քո գեղեցկությունը չի տեղավորվի իմ իմացած տարողություններից ոչ մեկի մեջ: Ինչի՞ ես եկել: Ո՞նց եմ բերանս բացելու, լեզուս շարժելու սրանց առաջ, երբ դու ես էստեղ: Էս վարդաբույրը հարբեցրել է բոլորիդ, բայց ինձ չեք առնի դրանով… Ի՞նչ եք աչքներդ վրաս պլշել, հոգեբուժարան է պետք տանել բոլորիդ:

Տիրամայրը արդեն մոտ էր, նրա աջը արդեն դրված էր Ռեջեփի ճաղատացող գլխին: Խեղճը խուճապի մեջ նայեց Տիրամոր ձեռքին, զարմացավ, որ այդ ձեռքը մաքուր, պայծառ լույս է ճառագում ու չի խորշում իր հողանյութ, գորշ քրտնակալած գագաթին հպվելուց… Ընկավ գետնին, որ պոկվի ձեռքի այդ հպումից, դեմքով թաղվեց զմրուխտ խոտերի մեջ… Չգիտեր՝ թրջված հրեշի իր տեսքով ուր թաքնվի… Շուրջը հավաքվածներից ոչ մեկին չէր կարող սարսափ ներշնչել:

- Թողե՛ք ետ գնամ,- տեղից վեր ելավ ու նորից ծնկի ընկավ, լացող դեմքը քսեց զմրուխտե կանաչ ծածկույթին:- Աղաչում եմ, Մեծ Թուրանը առանց ինձ կմնա միայն գաղափար: Մեկ էլ ե՞րբ է ծնվելու մի նոր Ռեջեփ, որ էս մեծ գաղափարը կյանքի կոչի…

- Քո ինչի՞ն է պետք Մեծ Թուրանը,- անկեղծորեն խղճահարվեց ու մի անգամ էլ խոսեց Աբու Բաքրը՝ խելամիտ պատասխան սպասելով պարանոյիկից:

- Ի՞մ ինչին է պետք,- զարմացավ Ռեջեփը:- Ուզում ես ասել, որ իզո՞ւր էին իմ բոլոր չարչարանքները: Իզո՞ւր եմ էդքան զենք կուտակել: Ամբողջ իսլամական աշխարհին է պետք:

- Իսլամական աշխարհի սովյալներին զենքո՞վ ես կերակրելու:

- Ձենքով անհավատներին եմ կերակրելու,- փորձեց քրքջալ, բայց ծղրտոց ելավ կոկորդից:- Մի՞թե դա չի Ալլահի ուզածը, որ Ձեննեթ տանի ամեն մի մուսուլմանի հոգին…

- Դու հույս ունես, որ Ձեննե՞թ ես գնալու,- անչափ խղճահարությամբ ևս մի անգամ խոսեց Աբու Բաքրը:

- Չէ՛, դեռ կիսատ գործեր ունեմ, շատ անելիք ունեմ, թողեք գնամ ի՛մ, ի՛մ երկիրը:

- Լավ,- հոգնած արտաբերեց Գաբրիել Հրեշտակապետը,- թողնում ենք, գնա՛, բայց այս անգամ կանգնելու ես քո զինվորի կողքին, ահա այդտեղ,- Տիրամայրը, իր լուսափայլ ձեռքի տակ առած Ռեջեփի գլուխը, տիկնիկի գլխի պես շրջեց դեպի էկրանը…

Խեղված, գազաններից հոշոտված դիակների, գնդակոծումից վիրավոր գեներալի արյունլվիկ գալարումների, զինվորների սոսկահար հայացքների, հառաչների մեջ կանգնած էր Ռեջեփը՝ կարմիր ֆեսը գլխին, ատավիստիկ իր դրսևորույթով՝ փշաքաղված սև մազածածկույթով, իր հետզհետե երկարող պոչով դիվաճանճերին այսուայն կողմ էր քշում ու չէր ազատվում նրանցից…

Վերին դատաստանի առջև կանգնած՝ նա փորձեց հոխորտալ սոսկումնահար փախչող զինվորների ետևից, բայց կոկորդից միայն խզխզոց դուրս եկավ… Սկսեց բռունցքներով հարվածել աչքերին…

Տիրամայրը նորից նրան առավ իր լուսաշող ոլորտը, գլուխն առավ ձեռքերի մեջ ու գորովանքով նայեց ուղիղ աչքերին…

- Լավ,- հուսահատ համաձայնեց Ռեջեփը,- ինչևէ, տարե՛ք ինձ Ձեննեթ:

- Ձեննե՞թ,- զարմացած իրար նայեցին ու մի պահ անշարժացան քիչ հեռվում խոնված, անհամբերությունից իրար հրհրող, շրթունքները լպստող ու տեղում անճոռնի ոստոստացող բոլոր շեյթաններն ու նրանց ճուտերը:

- Տարե՛ք,- կարգադրեց Գաբրիել Հրեշտակապետը նրանց: Դեմքից չքացել էր ոսկեհուռ ժպիտը…

Իսկ Տիրամայրն իր լուսաշող ափսոսանքով նայեց նրա ետևից, լաց եղավ մարգարտյա արցունքներով ու որոշեց մի անգամ էլ իջնել Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու խորանին… Իջավ:

Իրեն Մուհամմեդի օծյալը համարող մի ընտանիք խուճապահար դուրս պրծավ եկեղեցուց, ցատկով տեղավորվեց արևից շիկացած «Ջիփի» մեջ… Տիրամայրը նրանց ետևից էլ նայեց ափսոսանքով ու խորը վշտով…

Օգտագործված են թեմային առնչվող հրապարակումներ և համապատասխան գրականություն: Փաստերը հնարավորինս ստուգված են:

Գրական թերթ

Գլխավոր խմբագիր՝
Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.
Նորայր Ադալյան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Աելիտա Դոլուխանյան, Ազատ Եղիազարյան, Գուրգեն Խանջյան, Սամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Սարիբեկյան

Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ- ն:
Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ:
Տպաքանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:
Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ն՝ ՀԳՄ «Լ. Ջ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:

0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakantert@gmail.com